



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

616.9

f-91



30 JUL 2010

616.9
P-91

ԲՃ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ.

(ԳԼԽԻ ԵՎ ՈՂՆԱԾԱՐԻ)

ՈՒՂԵՂԻ ՍԻՖԻԼԻՍԸ

249

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
* ՍԵՐՈՒԲԵՆ - ԻՆՃԻԿԵԱՆ *
23 ՅՈՒՆԻՍԵՔ 1929 ԹՎԻ

ԳՈՒՇԿՐԵՆԱՆ ԱՐԽԻՎՏԻՔԻ ՏՊԱՐԱՆ
ԼԵՇՏՈՒԿՈՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.
1902

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՃԱՄԱՐ՝

1. Քուն և երազ:
2. Ստամոքսի հիւանդութիւնները (Թարգմ.):
3. Իրաւունք և կռիւ:
4. Մնտիապաշտութիւն:
5. Բնութեան ոյժը, ինչպէս բժիշկ:
6. Երեխաների բնաւորութիւնը:

Ե՛յս վեց գրքոյկներից գոյացած զուտ արդիւնքը կուղարկուի Պարսկաստանում բացուելիք «Նալբանդեան - Պատկանեան դիւղատնտես - արհեստագիտական դպրոց»-ի օգտին:

Սիր ժամանակի հսկայական ձեռնարկութիւնները արդիւնք են ոչ միայն առանձին անհատների զոհաբերութեան, այլ ամբողջ հասարակութեան համակրանքի ու ջանքերի....

ԳԻՄՆԷ՝ Թիֆլիս, «Ղուտտէնբերգ» և «Վենդրոնական» գրավաճառանոցները:

Հոյ Կարպեղի Աբովիանցի
ԲՃ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

616.9
F-91
այ:

ՈՒՂԵՂԻ

Մ49

ՍԻՖԻԼԻՍԸ



(ԳԼԻԻ ԵՒ ՈՂՆԱՀԱՐԻ)

75



Ս. ՊԵՏԵՐՅԱՆ

«ԳՈՒՀԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1902

55526

11.03.2013

6774

Дозволено цензурою. С.-Петербургъ, 12 Сентября 1902 года.

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՌՈՒՍ

ՍԻՖԻԼԻՍԱԳԷՏ

ՊՐՈՓԵՍՈՐ ՎԵՆԻԱՄԻՆ ՄԻՒՍԱՅԼՈՎԻՉ

ՏԱՌՆՈՎՍԿՈՒՆ

Խորին պատկառանքով

ՆՈՒԻՐԻՈՒՄ Է

այս աշխատութիւնը





ԵՐԿՈՒ

Մինչև այժմ լոյս տեսած իմ մի.բանի գրքոյկներումս շարունակ ցոյց եմ տուել այն վնասները, որոնք ծագում են ամուսնութիւնից դուրս տեղի ունեցած սեռական յարաբերութիւններից. մանաւանդ կանգ եմ առել առհասարակ վնեւրական ախտերից և մասնաւորապէս սիֆիլիսի վարակումից առաջացած վնասների վրայ:

Մասնացոյց եմ արել նոյնպէս այն հանգամանքի վրայ, որ միայն մինչև ամուսնութիւն պահած կատարեալ ողջախոհութիւնը և յետոյ մարդը ամուսնական կեանքը կարող են փրկել մարդուս վնեւրական ախտերով և սիֆիլիսով վարակուելուց:

Այս աշխատութիւնը նախընթացների շարունակութիւնը լինելով՝ նպատակ ունի մի անգամ ևս ապացուցանելու ընթերցողին, թէ ի՛նչ ահագին վնաս է հասցնում մարդս իրան և իր սերունդին, վտանգի ենթարկելով իր առողջութիւնը, այսինքն՝ վարակուելով մի այնպիսի ծանր հիւանդութեամբ, ինչպիսին է սիֆիլիսը:

Ես ուզում եմ այժմ մասնացոյց անել սիֆիլիսական ծագում ունեցող մի շարք հիւանդութիւնների վրայ, որոնք շատ վտանգաւոր են և ծանր կերպարանք են ընդունում:

Հատերը գիտեն, որ սիֆիլիսից շատ անգամ մարդուս քիթն է ընկնում, այլակերպւում է դէմքը և մարդիկ սաստիկ վախենում են այդ բանից. բայց շատ քիչերը գիտեն, թէ ինչ տեսակ ծանր ներվային հիւանդութիւններ է բերում իւր հետ գլխի և ողնաշարի ուղեղի սիֆիլիսը:

Գիտութիւնը իւր ներկայ վիճակի մէջ ցոյց է տալիս, թէ սիֆիլիսը բուժելի հիւանդութիւն է, իսկ գլխի և ողնաշարի ուղեղի բազմատեսակ խանգարումները ընդհանրապէս հետևանք պէտք է համարել անբաւարար և աննպատակայարմար բժշկութեան:

Հէնց այս հանգամանքը դնելով ընթերցողի առաջ ցանկալի է մի անգամ էլ շեշտել այն բանի վրայ, թէ ով որ դժբաղդութիւն է ունեցել տկարանալու այդ հիւանդութեամբ, նա պէտք է ժամանակ չկորցնի և յուսահատուի, այլ պէտք է բժշկին դիմէ, կատարելով նրա բոլոր ցուցումներն ու խորհուրդները՝ մտաւորապէս հինգ տարի. և ի հարկէ հիւանդը չպէտք է ամուսնանայ, մինչև որ լիակատար առողջութեան մասին երաշխաւորութեան վկայական չտանայ իւր բժշկից:

Այստեղ էլ ահագին դեր է խաղում մեր թշուառ ժողովրդի գործնական, ժամանակակից լուսաւորութիւնը և նորահաս սերնդի պատշաճաւոր ու կանոնաւոր դաստիարակութիւնը:

Բժ. Ա. Բաղդասար

Ս. Պետերբուրգ, 1902 թ.



Ա.

Սիֆիլիսը մի սոսկալի պատուհաս է մարդկութեան համար, որովհետև պատճառ է դառնում նրա այլատեսան:

Սիֆիլիսը չի խնայում մեր մարմնի և ոչ մի գործարանը (օրգանը). նա հարուածում է մարդուս ներքին գործարանները — թոքերը, լեարդը, սիրտը, աղիքները, ոսկորները, փայծաղը — մի խօսքով մեր մարմնի բոլոր մասերը:

Այս հիւանդութեան ամենամեծ վտանգը այն է, որ նա հարուածում է նաև այնպիսի քնքուշ ու ազնիւ գործարաններ, ինչպէս են օրինակ՝ գլխի և ողնաշարի ուղեղները և ներվերը — շղերը:

Կուռի մէջ լիակատար յաղթանակ տանելու համար հարկաւոր է թշնամուն ուսումնասիրել ոտքից գլուխ. և որքան շատ տեղեկութիւն ունենանք, այնքան հեշտ կը լինի յաղթութիւնը:

Այժմեան գիտութիւնը սիֆիլիսն է համարում ներվային և հոգեկան հիւանդութիւնների էական պատճառներից մէկը:

Սիֆիլիս ունեցողը աւելի շուտ հիւանդանում է տաբէսով — մէջքի ուղեղի հիւճումով — և առաջընթաց կաթուածահարութեամբ (պրոզրէսիֆիսի պարալիչ) — զլխի ուղեղի և ողնաշարի ծանր հիւանդութիւններով — քան թէ սիֆիլիս չունեցողը:

Եւ իրաւ՝ վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ տաբէսը և առաջընթաց կաթուածահարութիւնը դարգանում են միայն այն մարդկանց մէջ, որոնք երբևիցէ վարակուած են եղել սիֆիլիսով:

Յայտնի է, որ տաբէս ունեցողներից և առաջընթաց կաթուած ստացողներից հարիւրից մօտ 80-90-ը սիֆիլիս են ունեցած, և ստացած են 5, 8, 10, 15 և մինչև անդամ քսան տարի առաջ:

Այստեղից երևում է, որ ով որ սիֆիլիս չէ ունեցել, նա համարեա ապահովուած է տաբէսով և առաջընթաց կաթուածահարութիւնով հիւանդանալուց:

Սակայն ասածներէցս չպէտք է եզրակացնել, թէ ամեն մի սիֆիլիս ունեցող պէտք է անպատճառ այդ սարսափելի հիւանդութիւններից մէկովը բռնուի:

Ընդհակառակը՝ վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ սիֆիլիսով հիւանդների մի ահազին մասը չի ենթարկուում յիշուած հիւանդութիւններից և ոչ մէկին:

Որպէսզի սիֆիլիս ունեցողը հիւանդանայ տաբէսով կամ առաջընթաց կաթուածով, պէտք է լինին որոշ պայմաններ, որոշ վնասաբեր հանգամանքներ, որոնց մասին կը խօսուի յետոյ:

Միայն չը մոռանանք, որ սիֆիլիսը շատ ծանր հիւանդութիւն է, սակաւ կամ վատ բժշկուելը, ժառանգական նախատրամադրութիւնը, հոգեկան պայմանները, ակոհոյիզմը, մի քանի այլ վարակիչ հիւանդութիւններ մտնում, նուազեցնում են օրգանիզմը և բնականաբար առաջ են բերում նեարդային ու հոգեկան ծանր հիւանդութիւններ:

Բ.

Նեարդային սիստեմի սիֆիլիսի նշանները շատ բազմատեսակ են. նրա այս կամ այն մասի աննշան փոփոխումն անգամ առաջ է բերում ծանր կամ թեթեւ աստիքներ (պրիպազոկ), որ հեշտ են աչքի բնկնում:

Յիշենք, որ զլխի և մէջքի ուղեղը դանւում է, այսպէս ասենք, ոսկրային աուփի մէջ, որը, ինչպէս յայտնի է, շատ յաճախ վնասուում է սիֆիլիսից:

Պարզ է, որ գանդի ոսկրների փչացումը, որ կարող է պատուհէլ նաև նրա ներսի երեսում, պէտք է որ ազդի զլխի ուղեղի զործունէութեան վրայ:

Միւս կողմից՝ գլխի ու մէջքի նեարդերը զանգի և ողնաշարի խոռոչներից դուրս գալով, անցնում են բազմաթիւ ոսկրային ծակոտիների միջով, որոնք կարող են սիֆիլիսից սեղմուել, փոքրանալ և հետեւաբար սեղմել ու նեղել նեարդերը և նրանց վնասել:

Ուղեղային ուռոյցներ կարող են տեղի ունենալ նոյնպէս զանգի ու ողնաշարի ներքին մասերում, այդ ուռոյցքները կարող են սեղմել նոյն իսկ ուղեղը և նրան պատող թաղանթը և այդպիսով առաջացնել այդ նուրբ օրգանների անմիջական վնասում և հիւանդութիւնը կարող է տեղական կամ ընդհանուր լինել:

Գլխաւորն այն է, որ սիֆիլիսը շատ յաճախ հարուածում է ուղեղի և ողնաշարի միջի մանր երակները, որոնց պատիկները կամ փուխը են դառնում և հեշտ պատուում, և կամ հաստանում ու անանցանելի դառնում, որից առաջ է գալիս ուղեղում արիւնաժորութիւն և ուղեղի փափկացում:

Այսպէս թէ այնպէս՝ հիւանդը ենթարկուում է ուղեղային կաթուածի կամ ուղեղի խանգարումների:

Այսպիսի դժբաղդ փոփոխութիւններ է առաջ բերում համարեա և ալկոհոլիզմը:

Աստիքների (պոլիպաղոկ) յոժն ու ձևը, ի հարկէ, ամբողջապէս կախուած են լինում ոսկրի հիւանդութեան զարգացման աստիճանից, նրա զրաւած տեղից, հիւանդի հասակից, եթէ չկան նաև ուրիշ հանգա-

մանքներ ու հիւանդութիւններ բացի սիֆիլիսից:

Պարզ է, որ այդպիսի մարդու մօտ առաւելապէս պէտք է վնասուի հոգեկան կեանքը, զգացողական ու շարժողական կողմը:

Ո՛րքան ուրեմն բազմազան ու բարդ պէտք է լինին գլխի և ողնուղեղի սիֆիլիսով հիւանդանալու միջոցին երեցած նշանները:

Գ.

Սիֆիլիսի թոյնը մանելով օրգանիզմը, նախ հարուածում է ամենից մօտ գտնուող աւշային գեղձերը (ժեկէղի) և այնտեղից արդէն տիրում է մարդու ամբողջ մարմնին:

Վարակման բոպէլից վեց-ութ շաբաթ անցած՝ սիֆիլիսի թոյնը յայանուում է իւր երկրորդ շրջանի մէջ — կաշու, լորձաթաղանթների վրայ և այլ մասերում:

Մարմնի վրայ վարակման նշանները առաջին երեք և աւելի տարիներում սովորաբար երևում են երկուսից մինչև վեց անգամ — այդ, այսպէս ասած, երեւոյթների կրկնումն է — բեցիտիվն է:

Գլխի և ողնաշարի ծանր աւերումներ լինում են վարակումից վեց, տասը և մինչև անգամ երեսուն տարի անցած:

Այս վերջին հիւանդութիւնները կարող են պատահել նաև աւելի վաղ, այսպէս նկատուած կան

զանազան կաթուածներ վարակման օրից երեք-վեց ամիս անցած:

Երբեք չպէտք է մոռանալ, որ ամեն մարդ իւր առանձին տեսակի սիֆիլիսն է ունենում: այստեղ մեծ նշանակութիւն ունի մարդուս անհատականութիւնը:

Ներվային մարդկանց վրայ սիֆիլիսի երկրորդային երևոյթները անորոշ են լինում և մինչև անգամ կարող են բոլորովին չերևալ:

Այս դէպքերումն է, որ հիւանդների մեծամասնութիւնը չի կատարում բժշկի խորհուրդները, և այդտեղից առաջանում է ապագայում վիշտ, դժբաղդութիւն և արդէն անօգուտ և ուշացած զղշում:

Ընդհանուր սովորական պայմաններում մարդու կազմուածքի մէջ այն հիւսուածքներն են հարուած ստանում, որոնք իրանց բնախօսական (ֆիզիօլօգիական) առանձնայատկութիւններով ամենից աւելի անկայուն ու թոյլ են:

Ենթադրենք, որ մի մարդու նեարդային սիստեմն ի բնէ կամ կենսական ձախորդ հանգամանքների շնորհիւ ներկայացնում է թոյլ դիմադրութիւն դէպի հիւանդութիւնները. բնական է, որ սիֆիլիսն իւր ամբողջ ծանրութեամբ ընկնի հէց այդ սիստեմի վրայ:

Ուրեմն սիֆիլիսական թոյնը այս կամ այն յաջող պայմանների շնորհիւ կհարուածի նեարդային

կազմութիւնը, այսինքն՝ զլսի կամ ողնաշարի ուղեղը:

Որո՞նք են այդ յաջող պայմանները նեարդային սիստեմի համար՝ կիսուենք մանրամասն:

Կ.

Մեր ջղային դարը...

Երբոր խօսուում է ներվայնութեան (ջղայնութեան) մասին՝ հասկացում են նեարդային ինչպէս և հոգեկան հիւանդութիւններ. բացի դրանից այդ բառը բնորոշում է ներքին գործարանների մի առանձին դրութիւնը, որը կոչւում է ջղայնութիւն, նեարդայնութիւն (ներվուստ):

Այդ նշանակում է, որ նեարդային սիստեմը կորցրել է իւր կայունութիւնը, և թէև դեռ չի հասել հիւանդութեան աստիճանին, բայց խանգարուել է մարդու առողջութիւնը, որոշ չափով ինքնազգացումն ու աշխատելու ընդունակութիւնը:

Ջղային են համարում այնպիսի մարդկանց, որոնք չափազանց հեշտ զրգուում են և ամենաթեթև աշխատանքից թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ մտաւորապէս յոգնում են:

Այս ներվային արարածները ամենաթեթև վրդովմունքից անգամ սրտի սաստիկ բարախումն են ունենում, մարմնի վրայ սարսուռներ են զգում, վատ

են քնուով, առանց որոշ պատճառի վատ տրամադրութեան մէջ են ընկնում, դէս ու դէն են ընկնում, անհանգիստ են, ցրուած և այլն:

Եւ յիրաւի ասում են, թէ ներվային մարդկանց թիւը վերջին ժամանակներս աճում է զարմանալի արագութեամբ:

Իժբաղդաբար դրա հետ աւելանում է և խսկապէս ջղային հիւանդների և ցնորուածների թիւը:

Այստեղ պէտք է ի նկատի ունենալ հետեւեալը. ջղայնութեան քայքայման ամենաբարձր աստիճանին հասած մարդը շատ անգամ չի կորցնում ընդունակութիւնները և չի հասնում խելագարութեան, ինչպէս և զանգուղեղի հիւանդութիւններից թէև խանգարուում է մարդու հոգեկան աշխարհը, բայց այդ էլ ոչ ամեն ժամանակ:

Իրա հետ միասին շատ խելագարուածների վրայ նկատուում են ներվային չափազանց սուր երեւոյթներ, օրինակ՝ անդամալուծութիւն, խօսողութեան քայքայում, ցնցողական շարժումներ և այլն, այն ինչ մի ուրիշ կարգի խելագարներ, չնայելով իրանց իժբաղդութեան երկար տարիներ տևելուն, բոստ երեւոյթին ազատ են լինում նեարդային քայքայումներից և սովորական նորմալ մարդկանցից տարբերուում են միայն իրանց զառանցանքով և տարրինակ վարմունքներով:

Յոյց տրուած բարդ հանգամանքները կախուած

են ներվային սխտեմի կազմութեան բարդութիւնից և նրա բազմատեսակ զործունէութիւնից:

Ներվային և հոգեկան հիւանդութիւնների պատճառները համարեա կարող են առաջ դնալ ձեռք ձեռքի տուած:

Թէև մեր «ջղային դարի» վերաբերմամբ մեր ունեցած յոռետեսական (պեսիմիստական) հայեացքը չի յենուում բաւարար փաստերի վրայ, բայց և այնպէս չի էլ կարելի բացասել, թէ հոգեկան հիւանդութիւնների որոշ չափով աճելը կապուած է ազգաբնակչութեան աճման հետ և այդ իրաւացի է բոլոր երկիրների համար:

Եւ այս բոլորը հաստատուում են վիճակագրական թիւերը:

Բանից երևում է, որ սեռը դեր չի խաղում հոգեկան քայքայման հիւանդութիւնների մէջ:

Կանայք և տղամարդիկ հիւանդանում են համարեա հաւասար չափով, թէև կեանքի զանազան շրջաններում այդ յարաբերութիւնները փոփոխական են լինում:

Ինչ վերաբերում է հասակին՝ արդէն ամենամեծ տոկոսն ընկնում է հասունութեան տարիներին — երեսունից մինչև քառասուն տարին:

Այնուհետև աւելի յաճախ հիւանդանում են քառասուն տարեկանից մինչև յիսուն և յիսունից մինչև վաթսուն տարեկան հասակը:

Մանկական և պատանեկական հաստիում, մինչև քսան տարին, հոգեկան հիւանդները կազմում են 7-8 տոկոս, բայց դրա փոխարէն այդ հասակը ահազին քանակութեամբ ապուշներ և թուլամիտներ է տալիս:

Խելագարութեան վիճակագրութեան մէջ պարզ երևում է ընտանեկան դրութեան ազդեցութիւնը:

Երևում է, որ ամենուրեք հոգեպէս հիւանդների թիւը աւելի մեծ է ամուսիններից բաժանուածների և ամուրիների մէջ, քան թէ ամուսնացածների:

Նշանակութիւն ունի և մարդու պարապմունքը:

Խելագարութիւնը ամենից քիչ նկատուում է արհեստաւորների և երկրագործների մէջ:

Ջղային հիւանդութիւնների վերաբերմամբ այսպիսի վիճակագրութիւն չկայ, բայց հաւանական է, որ նեարդային քայքայումները թուով համեմատ են հոգեկան խանգարումների հետ:

Սյստեղ պէտք է խօսել այն կործանիչ ազդեցութեան մասին, որ գործում է կեղծ քաղաքակրթութիւնը մեր նեարդային սիստեմի վրայ, որովհետև այժմ յայտնի է, որ ջղայնութիւնը իւր բարդութիւններով մեծ քաղաքներում աւելի զարգացած է և աւելի շոշափելի ձևով է արտայայտուում:

Գոյութեան կռիւը մարդուն հասցնում է ամենախիստ լարուած դրութեան և այսպէս ասած՝

«ինտելիգենցիայի» մէջ փողու դիրք շահելու անշանքները ստիպում են մոռանալ առողջապահութեան ամենատարրական կանոնները:

Սյստեղ ոչ ոք չէ մտածում աշխատանքի և հանգստեան ժամերի կանոնաւորութեան մասին:

Աշխատանքը ինքը մեծ մասամբ կապուած է լինում վրդովմունքների, անհանգստութիւնների, հիասթափումների հետ, իսկ հանգստութիւնն էլ կայանում է աղմկալի զուարճութիւնների և առհասարակ զօրեղ յոյզերի մէջ:

Ուշ ամուսնանալը, որ մի կանոն է դարձել մեծ քաղաքների ինտելիգենցիայի համար, հասցնում է մարդկանց սեռական կեանքի անկանոնութեան:

Սյստեղ նեարդային դրութիւնը միշտ ենթարկուում է վատ ազդեցութիւնների:

Սրանք են այն պայմանները, որոնք զուամրուելով, ճշմարիտ որ մեծ քաղաքները նեարդայնութեան բոյն են դարձնում, որը կազմում է ներաստիւնիայի սանդուխքի առաջին աստիճանը:

Հասկանալի է, որ երբ այսպիսի մարդիկ վարակուում են սիֆիլիսով, հիւանդութիւնը ամենից առաջ հարուածում է նրանց նեարդային սիստեմը, քանի որ հոյր պատրաստ է:

Սյժմ տեսնենք, թէ ժառանգական նախատրամադրութիւնը ջղային հիւանդութիւններ ստանալու մէջ ինչ նշանակութիւն ունի:

10498
35926

Ե.

Մի քանի սերունդների մէջ միմիանց ետեւից միատեսակ կամ նման հիւանդութիւնների երեւան դալը, առօրեայ փորձերով հաստատուում է և պարզ է, որ այս բանում ժառանգականութեան ունեցած նշանակութիւնը անկարելի է մերժել:

Ինչպէս յայտնի է, ժառանգականութեամբ մի սերնդից միւս սերնդին անցնում են հոգեկան, ֆիզիքական նմանութիւններ, ինչպէս և հիւանդութիւններ և այդ նմանութիւնը լինում է ոչ միայն ծնողների և որդիների մէջ, այլ և պապի և թոռի մէջ, հօրեջրոջ և եղբորորդու (քեռու և քրոջ որդու), հօրաքրոջ և մորաքրոջ որդիների մէջ և այլն:

Իսկապէս ժառանգականութիւնը պէտք է ընդունել իբրև սերնդի նախատրամադրութիւն զէպի ներվային և հոգեկան հիւանդութիւններ, և ոչ իբրև պատճառ այդ հիւանդութիւնների:

Այդ արամադրութիւնն իսկ թագուն մնում է մինչև այն ժամանակ, երբ զաւակները ենթարկուում են զանազան վնասակար ազդեցութիւնների, որոնք առաջ են բերում նրանց մէջ որոշ հիւանդութիւններ:

Յայտնի է, որ այն ընտանիքներում, ոչտեղ ծնողներից մէկը կամ երկուսն էլ ներվային կամ հոգեկան հիւանդութիւնների ենթակայ են եղել կամ

իրանք ծնուած են եղել հիւանդ ծնողներից, նոյն սերունդները հոգեկան կամ ներվային հիւանդութիւնների տէր կլինին:

Մեզ համար աւելի կարևորութիւն ունին այն ներվային կամ հոգեկան հիւանդութիւնները, որոնք բնորոշուում են ներվային սխտամի որոշ մասերի (անատոմիական) խանգարումով:

Այդ կարգի ցաւերի գլխաւոր ներկայացուցիչներն են՝ առաջընթաց կաթուածահարութիւնը, որի հիմքը կազմում է ուղեղի կեղևի ընդհանուր բորբոքումը, և տարետը՝ որ հետեանք է ողնուղեղի յետակ որոշ մասերի և նրա հետ կապուած մասերի հիւանդադման:

Այս կարգի նեարդային և հոգեկան հիւանդութիւններէ մէջ վճռողական նշանակութիւն ունի ոչ թէ ժառանգականութիւնը, այլ որոշ վնասակար երեցիթների ազդեցութիւնը, ինչպէս օրինակ սիֆիլիսը:

Այնուամենայնիւ առաջընթաց կաթուածահարութիւնը յաճախ պատահում է այնպիսի ընտանիքներում, որտեղ նկատուում է մի անեսակ արամադրութիւն զէպի ուղեղային կաթուածներ՝ ուղեղի զարկերակների փխրունութեան պատճառով:

Եթէ նոր ամուսիններից մէկը առողջ է, իսկ միւսը հիւանդ՝ զաւակները կարող են ժառանգել

Հիւանդութիւն մի կողմից հօր պատճառով, միւս կողմից էլ մօր պատճառով:

Պարզ է, որ ներվային Հիւանդ մօր առողջութիւնը մեծ նշանակութիւն ունի:

Ներկայումս ծնողների առողջական դրութիւնը բեղմնաւորութեան վայրկեանում աւելի կարեւոր է:

Հէնց բանն այն է, որ բազմաթիւ Հետազօտութիւններով Հաստատուում է, որ ծնողներից մէկի արբած դրութիւնը այդ բոպէում արդանդի պտղի առողջութեան վրայ ունենում է կործանիչ ազդեցութիւն և ստեղծում է սերունդի մէջ նեարդային և հոգեկան Հիւանդութիւնների այն տեսակ նախաորամադրութիւն, ինչ տեսակ Հիւանդութիւն որ ունին անձնապէս ծնողները:

Շատ անգամ արբած միջոցում յղացած երեխան ապուշ է լինում:

Անկարելի բան է, որ ուրիշ պայմաններ ևս այսպիսի կործանիչ ազդեցութիւն ունենան, ինչպէս արբեցութիւնը, այսպէս և յոգնածութիւնը, հոգսերով ծանրաբեռնուած դրութիւնը, փոխադարձ սիրոյ բացակայութիւնը և այլն:

Իսկ եթէ ժառանգականութիւնը յայտնուած է աւելի ուժեղ ձևով, այն ժամանակ արդէն բանը Հասնում է վատասերման (այլասերման):

Այս երեւոյթի էութիւնը կայանում է նրանում, որ սաղմի անկանոն զարգացման պատճառով, էակի

կազմակերպութիւնը թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ հոգեպէս ստանում է անկանոն ուղղութիւն, ստորանում, փչանում է՝ կանոնաւոր զարգացած տիպերի համեմատութեամբ:

Պարզ է, որ վատասերումը նշանաւոր չափով տրամադրում է սերունդներին զէպի ներվային և հոգեկան Հիւանդութիւններ:

Սրանց մէջ ևս սիֆիլիսը իրան յարմար հոդ կզանի և կհարուածի ներվային սիստեմը:

2.

Իսկ պիոհոլիքմը

Եթէ մի կենդանի, օրինակ՝ շունը կամ կատուն, կամ ճագարը մի քանի ամիս շարունակ, ամեն օր ուտելիքի Հետ ստանայ մի որոշ չափով սպիրտ, նրա ներքին գործարաններում առաջ կզան զանազան տեսակ վնասումներ:

Այս վնասումները կնկատուին լեարդում, երիկամունքում, ուղեղում, սրտում և ուրիշ գործարաններում և զլխաւորապէս արեւնատար այն անօթների պատիկների մէջ, որոնց միջոցով կատարում է Հիւսւածքների սննդառութիւնը:

Նոյնը կլինի և մարդու գործարանների մէջ, երբ նա ընդունում է ամեն օր, կամ աւելի ևս վատ՝ օրը մի քանի անգամ սգելից խմիչքների մի այնպիսի

քանակութիւն, որը թէև չի արբեցնում, բայց որոշ փոփոխութիւն է մտցնում նրա արամադրութեան մէջ:

Այս դէպքում այդ թոյնի նոր մասնիկը մտնում է ներքին դործարաններն այն ժամանակ, երբ հիւս-
լածքները դեռ չեն ազատուած նախորդ՝ քիչ առաջ
ընդունուած սղիրաի ազդեցութիւնից. այսպիսով
առաջ է դալիս ժամանակի ընթացքում մշտապէս,
քրոնիքական ալկոհոլիզմ:

Նեարդային սիստեմը և մարդու հոգեկան աշ-
խարհը դժբաղդաբար աւելի խոր կերպով են հար-
ւածուում և այդ հարուածները աւելի բազմառեսակ
են լինում և համեմատաբար աւելի վաղ են դարդա-
նում:

Ալկոհոլիզմից աւելի յաճախ պատահում են
զլիսի ուղեղի հիւանդութիւններ՝ մեր յիշած պատ-
ճառներից:

Ուղեղի անօթիների պատիկները ասրէցտարի կորց-
նում են իրանց առաձգականութիւնը, հաստանում
են, դառնում են փխրուն և այդ բանի շնորհիւ շատ
արբեցողներ են թարկուում են ուղեղի արիւնաժո-
րութեան, որի հեռանքը լինում է սովորաբար ու-
ղեղի կաթուած և մարմնի կէս մասի անդամադու-
ծութիւն:

Կան և անդամադուծութեան մի քանի տեսակ-
ներ, որոնք կախումն ունին ողնաշարի ուղեղի և

դրսի ներվերի (պերեֆերիչեսկի) միաժամանակ հի-
ւանդանալուց — այդ ալկոհոլական անդամադուծու-
թիւնն է:

Կարեօր են սակայն իրենց սօցիալական նշա-
նակութեամբ աւելի այն փոփոխութիւնները, որոնք
առաջ են գալիս արբեցութեան շնորհիւ մարդու
հոգեկան շրջանում:

Եւ յիշուի ալկոհոլիզմը խելագարութեան ամե-
նանշանաւոր պատճառներից մէկն է:

Այդ կարգի խելագարութիւնները բազմառեսակ
են, որոնց մասին այստեղ խօսել աւելորդ է:

Առհասարակ այդպիսի մարդիկ լինում են սուուս-
նացած, դաւակների տէր և հասկանալի է, որ այդ-
պիսի անձերի երեխաները քիչ-շատ նեարդային
կլինին:

Նրանք կարող են հիւանդանալ սիֆիլիսով դեռ
մինչև խելագարուելը և հասկանալի է, որ այստեղ
պէտք է ամենից առաջ վնասուի նեարդային սիս-
տեմը և զլիսի ու ողնաշարի ուղեղը:

Արդէն յայտնի իրողութիւն է, որ ողեղից
խմիչքների ենթարկուած մարդիկ շատ դժուարու-
թեամբ են զիմանում սիֆիլիսի, որովհետև այդ
տեսակ հիւանդների սիֆիլիսը կատաղի է լինում:

Յայտնի պրոֆեսոր Տառնովսկին հիւանդին դեռ
հարց ու փորձ չարած՝ նրա մարմնի վրայի ցաների
ձևերից արդէն հասկանում է, թէ այդ սիֆիլիսով

վարակուած հիւանդը արբեցող է, միշտ օրական
երեք-չորս անգամ գինի, աչաղ խմող է:

է.

Այժմ համառօտապէս մի քանի խօսք պէտք է
ասել ուրիշ նշանաւոր թոյների մասին, որոնք մեծ
զեր են խաղում նեարդային հոգեկան հիւանդու-
թիւնների ծագման մէջ:

Այսպիսի թոյներով վարակուած մարդիկ ևս,
երբ սիֆիլիս են ստանում, շատ յաճախ ենթարկ-
ւում են զլխի և ողնաշարի ուղեղի և բնդհանուր
ներվային հիւանդութիւնների:

Մի ուրիշ զրքոյկում պիտի խօսենք մօրֆիի
(ափիոն), հաշիշի, արձձային թունաւորութեան,
ծխախոտի մասին, որոնք նոյնպէս քայքայում են
ներվային սիստեմը:

Նոյնպէս և մալարիան, այն է ճահճային դողի
թունաւորումը տրամադրում է մարդուս զէպի ներ-
վային հիւանդութիւններ. նա բաղմաթիւ ներվային
ցաւերի պատճառ է դառնում:

Նկարագրուած են նոյնպէս պսիխոզներ — հո-
գեկան հիւանդներ, — որոնց վիճակը կապ է ունեցել
մալարիայի հետ:

Ուղեղի թաղանթների և ողների տուբերկուլոզը,
ինչպէս և տիփզերիզը նոյնպէս փաստում են ներվերը:

Տիֆը, ծաղիկը, քութէշը պարարտ հոգ են
պատրաստում նեարդային և հոգեկան ամեն տեսակ
քայքայումների համար, որոնք զարգանում են այդ
հիւանդութիւններից առողջանալուց յետոյ:

Այս հիւանդութիւնների միջոցին ներքին գոր-
ծարաններում գոյանում են զանազան տեսակ թոյ-
ներ, որոնք ազդում են ամբողջ օրգանիզմի, գլխաւո-
րապէս ներվային սիստեմի վրայ. այդ կոչւում է
ինքնութունաւորութիւն (աւտոինդօսիկալիա), և
նեարդային սիստեմի վրայ կործանիչ ազդեցութիւն
է ունենում:

Նեաւքրքրական և շատ նշանաւոր է սեռական
կեանքի ունեցած նշանակութիւնը նեարդային և
հոգեկան զարգացման վրայ, մանաւանդ սեռական
չափազանցման ազդեցութիւնը, աւելի ևս մարմնա-
շարժութիւնը — ծնանիզմը:

Սեռական զգացմունքի չափազանց վաղ արթ-
նացումը և սրտանի հասակում զէպի ծնանիզմ
ունեցած անդուսպ ձգտումը ժառանգական վասթար
արտայայտումներից մինն է կազմում:

Այս տեսակ վիճակը պատրաստում է այն հո-
ղը, որի վրայ յաճախ զարգանում են ներվային և
հոգեկան հիւանդութիւններ:

Եթէ սեռական զրգումները և ծնանիզմի մի-
ջոցով սերմի կորուստը մանկական տարիներում պա-
տահել են շատ կանուխ, այն ժամանակ հետեւանքը

լինում է սեռական անկարողութիւն և առնուադն սեռական ընդունակութեան այնպիսի նուազում, որը շատ դժուար և անախորժ է լինում երիտասարդի համար և ճնշում է նրան բարոյապէս:

Սյն ժամանակ յաճախ զարգանում է ջղայնութիւն, և սեռական նուազման և անդադար հոգեկան ճնշողութեան պատճառով, կարող են առաջ դալ զանազան հոգեկան հիւանդութիւններ ճանկիղմի շտրհիւ:

Երբ ջղայնութիւնը առաջանում է սեռական անկարողութեան ժամանակ, շատ յաճախ յայանում են ցաւեր կռնակում, մէջքում, և հիւանդները յաճախ երկիւղ են կրում տարես ստանալուց, բայց իզուր:

Սյո, դու սիֆիլիս կտանաս, վատ կբժշկուես և եթէ տրամադրուած ես՝ կտանաս ողնաշարի հիւանդութիւն!...

Պէտք է ասել, որ մարմնաշարժութեան կործանիչ սոփորութիւնը ամենից շատ տասներկու, տասնուչորս, տասնևութր և տասնևինը տարեկան ազաների մէջ է երևում, երբ արդէն միջոց են ունենում նրանք մերձաւորուելու և համարեա միշտ վարակւում են սիֆիլիսով և վեներական ախտերով:

Իբրև սրբազան օրէնք ընդունեցէք ողջախոհութիւնը և միայն ողջախոհութիւնը...

Ոչ մի հիմք չկայ կարծելու, թէ սեռական զսպողութիւնը մի վտանգաւոր բան է կամ վնասակար է նեարդային սիստեմի համար:

Չափազանց յաճախ է պատահում, որ կինը բաւարարութիւն չէ ստանում մարդու սեռական թուլութեան պատճառով:

~~Սյգայիսի պոյժմոններում սեռական կեանքը կնոջ համար գառնում է դրդամունքի մի ազբիւր, յաճախ առիթ է տալիս ջղայնութեան զարգացման, խտերիկայի և դուցէ հոգեկան քայքայումների:~~

Ըստ երևոյթին սեռական կեանքի սյս աեսակ թերութիւնը կնոջ օրգանիղմի համար աւելի վնասակար նշանակութիւն ունի, քան թէ սեռական յարաբերութիւնների բացակայութիւնը կամ սակաւութիւնը:

Ջղային սիստեմը վնասւում է նաև այն դէպքում, երբ որ ամուսինները գաւակ չունենալու նպատակով դիմում են զանազան միջոցների:

Բացի կանացի հիւանդութիւններից սաստիկ ուժասպառ են անում ներվային սիստեմը նաև յանցաւոր վիժումները, որ կատարւում են քիչ երեսայ ունենալու համար:

Ի դէպ պէտք է ասել, որ առողջ՝ 25 տարին անցկացրած աղջիկը, որը զբաղւած չէ մի գործով, որը չունի կեանքի մէջ մի իդէալ, կարող է վնասուել ներվերով փեսայոււի ճամբոյ նայելուց:

ի հարկէ, այդ կախուած է անկանոն դաստիարակութիւնից:

Միթէ չորս կողմը քիչ բարոյական պարտականութիւններ կան կատարելու. չունինք դաստիարակներ, չունինք գրքեր ժողովրդի համար... բայց դոնէ այժմ հասկանանք:

Ը.

Պէտք է կարծել, որ հոգեկան վրդովմունքները միայն կարող են ներվային և հոգեկան հիւանդութիւնների պատճառ դառնալ:

Ճիգիքական օրգանիզմի վրայ աննպաստ ազդեցութիւն գործելով կամ սրտի գործողութիւնը և առհասարակ արեան շրջանառութիւնը խանգարելով՝ նրանք սպառում են ուղեղի մնդառութիւնը և զրանով պատրաստում են այս կամ այն հիւանդութեան երևնալը, որի ձևը որոշում է այլ հանգամանքների միահամուռ ազդեցութեամբ:

Հարկ չկայ ընդարձակելու մեր խօսքը, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի հոգեկան կեանքի համար դաստիարակութեան բնաւորութիւնը:

Դաստիարակութիւնից՝ բացի զուտ կրթական կողմը, կախուած են մեծ չափով նաև մարդու բնաւորութեան որպիսութիւնը, նրա կամքի ոյժը, զգացմունքների ուղղութիւնը, գործողութեան եղանակն

ու շրջանը և առհասարակ նրա ներքին աշխարհի ամբողջութիւնը:

Իրա համար և բնական է երբեմն դաստիարակչական ազդեցութիւնների մէջ փնտռել հոգեկան քայքայումների արդիւնքը, ինչպէս այն դէպքում, երբ նրանք յայտնուում են մանկական հասակում և աւելի ուշ՝ հասունութեան ժամանակ:

Եւ ճշմարիտ, երեսայի հոգին շատ աւելի զգայուն և ընդունակ է ըմբռնելու զանազան, ըստ երևոյթին, աննշան հոգեկան ազդեցութիւններ, քան թէ սովորաբար կարծում են:

Կասկած չկայ, որ շատ անգամ ամբողջ կեանքի համար ձեռք են բերում զանազան նախապաշարմունքներ և սնտախապաշտութիւններ զանազան բոնանների և կամ հէնց իրանց ծնոցների անհեռատես վարմունքի շնորհիւ:

Յաճախ ազէտ դաստիարակները մտցնում են մանուկների սրտերի մէջ ահ ու երկիւղ, որոնց արմատախիլ անելու համար մեծ ոյժ ու աշխատանք է հարկաւոր լինում:

Վնասակար են սղգում մանկան վրայ մանաւանդ իստերիկայի և հոգեկան խանգարումների այլ և այլ արտայայտումները:

Սյդ պատկերները նրան կրքային են դարձնում, և պարզ է, որ այդպիսի շրջանում նա չի կարող ինքնազսպումն ունենալ:


Սյրպիսի երեխայք, որոնք չեն սովորել զսպել իրանց կրքերը և անձնատուր կլինեն իրանց հոգու արամադրութեան և պատահական փոփոխութեան շատ աւելի հեշտ են ընկնում իստերիկ և ներվային ու մինչև անգամ հոգեկան հիւանդութիւնների տէր դառնում, ի հարկէ բարեյաշող պայմաններում, քան նրանք, որոնք մեծացել են այսպիսի սանձարձակ աւեսարաններից ազատ մթնոլորտում:

Ներվային սիստեմի վրայ վնասակար ազդեցութիւն ունի նաև երեխաների հետ չափազանց քնքոյշ վարուեցողութիւնը, որի ժամանակ ամեն մի քայլափոխում կարծում են, թէ ընտանիքում ամեն բան իրանց համար է անուում:

Այս հանգամանքը երեխաների մէջ ոչ միայն եսասիրութիւն — էգոյիզմ — է զարգացնում, այլև սովորեցնում է նրանց չափազանց ենթարկուել իրանց քմահաճոյքներին, մեծ նշանակութիւն տալ արամադրութեան փոփոխութեան և դրա համար էլ դարձեալ հոգ են պատրաստում իստերիկայի և ներվայնութեան համար:

Նոյնպէս վնասակար է դաստիարակչական կանոններին հակառակ այն բանը, որ երեխաներին վախեցնում են կոպիտ միջոցներով ու խիստ պատիժներով այնպէս որ նրանք մեծանում են մշտական երկիւղի տակ:

Վնասակար է նոյնպէս Ֆիզիքական ու մտաւոր ամեն աւեսակ յողնածութիւն. ամեն բանում պէտք է չափ ու սահման:



Թ.

Գանդի և ողնաշարի ոսկրների գանազան վերաւորութեանը (արափնն), նրանց փշրումը, մեր հոգեկան ներվային աշխարհի մէջ համապատասխան խանգարումներ են առաջացնում:

Նոյն աւեսակ դեր է խաղում ուղեղի հարուածումն առանց ոսկրների (կամ ոսկրային արկղիկի) վնասման. օրինակ՝ երկաթուղու խորտակումների, բարձր տեղից ընկնելու կամ երկրաշարժի ժամանակ:

Կասկած չկայ, որ դաստիարակչական նպատակով պործադրուող բուռնցքի հարուածները պէտք է վնասակար համարել երեխաների համար, որպէս ուղեղային հիւանդութիւնների պատճառ:

Մըսելն էլ, եթէ մարդ արամադրուած է, կարող է առաջացնել նեարդային հիւանդութիւններ:

Մի քանի բժիշկ զիանականներ ենթադրում են, որ տարեւոր մըսելուց էլ կարող է առաջանալ և մտանցոյց են անում այնպիսի դէպքերի վրայ, երբ հիւանդի ոտը, օրինակ, քամի է առել, կամ նա զիշերը խոնաւ զեանի վրայ, անտառում կամ ճահճային տեղում է անցկացրել և յետոյ երեւացել

են տարես հիւանդութեան սիմպտոմները — նշանները:

Յետոյ, պէտք է ասել, որ մրսելը նշանակութիւն ունի, ինչպէս երեւում է և մի քանի նեվրալգիաների (առանձին նեարզերի հիւանդութիւններ) առաջ գալու մէջ, առաւելապէս նստատեղի նեվրալգիայի համար, որը յայտնի է Նշխանանունով:

Գոնէ նկատուում են դէպքեր, որ վնասուում է հիւանդի հէնց այն ոտը, որ դտնուում է այսպէս ասած հակողէմ — սկիւզնոյ — քամիների միջև:

Բայի յիշեալ հիւանդութիւններից՝ ներվային սիստեմի վրայ կործանիչ ազդեցութիւն ունին նոյնպէս մեր կազմուածքի ընդհանուր խանգարումները, որոնք կարող են առաջացնել գանդան հիւանդութիւններ, ինչպէս օրինակ սակաւարիւնութիւն:

Ներվային սիստեմի հիւանդութիւնների համար ուրիշ շատ պատճառներ էլ կան, բայց այս ընդհանուր ցուցմունքը բաւական կլինի:

Բերուած օրինակներն էլ բաւական են ցոյց տալու համար, որ հիւանդութիւնները կախումն ունին օրգանիզմի ընդհանուր դրութիւնից և առանձին օրգանների խանգարումից:

Այսպիսով ուրեմն, ներվային և հոգեկան հիւանդութիւնների ծագման մէջ գերակշռող դեր խաղում են ներքին պատճառները, այսինքն՝ օրգանիզմի այն առանձնայատկութիւնները, որոնց շնորհիւ այս

կամ այն արտաքին պատճառների ազդեցութիւնը առաջացնում է այդ շրջանում որոշ հիւանդութիւն:

Օրգանների այդ առանձնայատկութիւններին, որոնք ունին այդպիսի կործանիչ նշանակութիւն, մենք անուանում ենք Նախադասաբար — Նի-ն:

Այս ամենից խոյս տալու համար անշուշտ հարկաւոր են ուրիշ պայմաններ:

Խիստ ցանկալի է և անհրաժեշտ է մատաղ սերնդի իրական, գործնական դաստիարակութիւնը. այս կերպով փառաւորապէս կյաղթենք մեր թշուառութիւնների աղբիւր՝ ծայրայեղ աղքատութեան և կոպիտ իրապաշտութեան — Նախերեւոյիցի:

Դէհ, կուրենք ուրեմն...

ժ.

Ամիրոփելով վերեւում մեր ասածները՝ դպիսեանք հետեւեալ եզրակացութեան:

Մարդու բոլոր գործարաններն էլ հաւասար դիմացկոտութիւն չունին և չեն կարող հաւասար չափով դիմադրել հիւանդութեան ազդեցութիւններին:

Շատ մարդկանց մի քանի ներքին գործարանները, դժբաղդաբար, ծնած բոպէից արդէն սովորականից թոյլ են լինում՝ երբեմն մեզ յայտնի, երբեմն էլ մի անյայտ պատճառով:

Հայրերի և մայրերի դործած մեղքերի պատճառով, ինչպէս արբեցութիւն և այլ արատները, Հիւանդութիւնների անխնամ թողնելու պատճառով առողջութեան խախտելը՝ առողջապահական հիմնական կանոնների անտես առնելը, արատացողում է որդիների վրայ, առաջ բերելով մի կամ բոլոր դործարանների թուլութիւն:

Նորածին երեխայի մի շարք դործարանները երբեմն վատասերուած են լինում ի ծնէ և Հեշտութեամբ ենթարկուում են պէս-պէս հիւանդութիւնների կործանիչ ազդեցութեան:

Միւս կողմից, բոլորովին առողջ և նորմալ մարդու կեանքի մէջ կարող են պատահել այնպիսի հանգամանքներ, որոնք մեծ չափով կ'թուլացնեն մի կամ մի շարք դործարաններ:

Այսպէս օրինակ մրտումը, արամիան, վարակիչ հիւանդութիւնները, զանազան ախտերը և այլն:

Այն ներքին դործարանները, որոնք այսպէս թէ այնպէս արդէն թուլացած են լինում և անկարող զանազան հիւանդութիւնների դիմադրել, կազմում են այն, ինչ որ յայտնի է բժշկութեան մէջ «ամենաթոյլ դիմադրութեան տեղ» անունով:

Այն ինչ որ ճիշտ է բոլոր հիւանդութիւնների վերաբերմամբ, ճիշտ է նոյնպէս և սիֆիլիսի համար:

Սիֆիլիսը, այս կամ այն ճանապարհով տիրելով մարդու օրգանիզմին, հարուածում է զխաւորապէս

այն գործարանները և հիւսուածքները, որոնք ներկայացնում են կեանքի ամենանուաղ տոկոսութիւն:

Եթէ սիֆիլիսի վերաբերմամբ նոյնպէս թոյլ է հանդիսանում ներվային սիստեմը—զլխի և ողնաշարի ուղեղը իրանց մասերով—, այն ժամանակ մենք կստանանք սիֆիլիսական ծանր հիւանդացումներ:

Ասէնք, որ կանոնաւոր և համապատասխան բժշկումը այստեղ մեծ նշանակութիւն ունի, նշանակութիւն ունի և հիւանդի կեանքի և ապրելու եղանակը:

Պարտաւորուած մի այսպիսի շեղում գործելուց յետոյ՝ այժմ դառնանք արդէն մեր հիւանդին—զլխի և ողնուղեղի սիֆիլիսին:



Կենդրոնական նեարդային երեւոյթները կարող են տեղի ունենալ նաև սիֆիլիսով հիւանդացածների վրայ:

Գանդուղեղային սիֆիլիսի ամենայաճախ նկատուած երեւոյթները հեռեեալներն են. զլխացաւ, զլխի պտոյտ, ուշագնացութիւն, սրտնեղութիւն, էպիլեպսիա (ընկնաւորութիւն), հեմիպլեգիա (մարմնի կէսի կաթուածահարութիւն), աֆազիա (խօսելու ընդունակութեան կորուստ) և այլն և այլն:

Գլխացաւը կամ ընդմիջուած է լինում, կամ

Թէ չէ կամոց կամոց սաստկանալով աւելի յաճախ
և աւելի սաստիկ է երևում:

Յաւի ամենասաստիկը լինում է զիշեր ժամա-
նակ:

Գլխացաւի հետ միաժամանակ պատահում են
նոյնպէս զլիսի պոռոյտ, ուշադնացութիւն և ցնցում-
ներ:

Մանաւանդ յաճախակի նկատուում է դիտակցու-
թեան թեթեակի թուլացում, ընելու հակում, մտքերի
բաւականին խճճումն ու գրգռուած գրութիւն, շատ
անգամ էլ այս բոլորին միանում է սաստիկ ծարա-
ւութիւն:

Բնորոշ է այն հանգամանքը, որ դիտակցութեան
և հոգեկանութեան զանազան քայքայումները փո-
խարինում են մէկը միւսին, և ընդհատուում են ու
թողնում են իրար մէջ միջոցներ, որոնց ընթացքում
դիտակցութիւնը պարզ է լինում:

Նկատելի է, որ սիֆիլիսային գլխացաւը երբեմն
երևում է ու անհետանում օրուայ մէջ որոշ ժամերին:

Գլխացաւի սաստկութեան ժամանակ ցաւը
լինում է սուր, ծակող և երբեմն ծայրահեղ սաստ-
կութեան է հասնում, մինչդեռ ընդմիջումներին ցաւը
կամ բոլորովին դադարում է, կամ այնքան է թուլա-
նում, որ հիւանդը միայն զլիսի թեթև, բութ ձնշում
է զգում:

Գլխացաւը երբեմն է միայն սահմանափակուում
մի որոշ տեղում, իսկ մեծ մասամբ նա զբաւում է
ամբողջ ձակատը, քունքերը, դագաթը, նոյնպէս և
ծոծրակը, այնպէս որ թւում է, թէ ցաւը դալիս է
ուղեղի խորքից:

Այս գլխացաւերի միջոցին գանգի ձնշումը
ընդհանրապէս զգալի չի լինում, իսկ երբ այդ
ձնշումը ցաւ է յարուցանում, այդ նշանակում է, որ
գանգի ոսկրները վնասուած են կամ թէ չէ կաշու
զգացողութիւնն է սաստկացած:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ գլխացաւի
զիշերային սաստկացումը քունը խանգարում է:

Գլխացաւը ոչ միայն սիֆիլիսի մշտական երե-
ւոյթներից մէկն է, այլ և ամենքից վաղ երևացող
նշանը, այնքան վաղ, որ կանխում է հիւանդութեան
միւս երևոյթներին, օրինակ անգամալուծութեան:

Սակայն պէտք է նկատել, որ դժբաղդաբար
միշտ չի յաջողում ձշտութեամբ որոշել, թէ այդ
ցաւը սիֆիլիսական ծագում ունի, թէ մի ուրիշ
հիւանդական գրութեան արտայայտութիւն է:

Շատ անգամ գլխացաւին միանում է փսխումը,
որը շատ դէպքում համարեա անբաժան է լինում
նրանից և երևում է ցաւի սաստկութեան ժամանակ:

Բայց և պէտք է նկատել, որ այդ սիմպտոմը
(փսխումը) կարող է բոլորովին բացակայել:

Իսկ մի քանի դէպքերում գլխի պտոյտը և փսխումը շատ ամիսների ընթացքում կարող են ուղեղային սիֆիլիսի միակ նշանները լինել:

Կանոնաւոր բժշկութեամբ գլխացաւը շուտով ու անհետք անցնում է և հիւանդութիւնը բոլորովին վերջանում է. բայց եթէ հիւանդը առանց բժշկելու է մնում, այն ժամանակ հիւանդութիւնը կարող է սաստկանալ ու առաջ բերել ուրիշ շատ ծանր բարդումներ:

Ժ.Բ.

Սալորաբար, երբ որ գլխացաւը անհամապատասխան և թերի բժշկութեան պատճառով չի անցկենում, հիւանդը դանդաղանում է սրանդոթութիւնից և գլխի պտոյտից:

Գլխապտոյտը յաճախ մէջ ընդ մէջ է լինում: մի քանիսները հաւասարակշռութեան տևողական խանդարումն են ունենում, այնպէս որ կանգնած տեղերը օրօրում են. սակայն ուրիշ դէպքերում հիւանդները գլխապտոյտ ասելով հասկանում են դիտակցութեան թէթևակի բթացումն:

Գիտակցութեան այդպիսի խանդարումներ լինում են նաև ուղեղային ոչ սիֆիլիսական ուռոյցքների ժամանակ:

Սիֆիլիսային սաստիկ գլխապտոյտի միջոցին հիւանդը մի տեսակ թմրած, քնած ըու թեան մէջ է ընկնում:

Ուշադրութեան արժանի է նոյնպէս մի այլ երևոյթ, այն է քնկոտութիւն (սպիազկա). քնից վեր կենալու միջոցին հիւանդը չի կարողանում գուարթանալ, առոյգանալ, այլ իսկոյն ևեթ ընկում է նորից քնի մէջ:

Շատ դէպքերում ժամանակի ընթացքում հիւանդի մտաւոր ընդունակութիւնները թուլանում են:

Մտաւոր ընդունակութիւնների թէթևակի բթացումից մինչև թուլամտութեան որոշակի կերպով արտայայտուելը կան բազմաատեսակ սաստիճաններ:

Սէքի են ընկնում մտածողութեան դանդաղութիւնը, խօսելու և շարժումների թուլութիւնը, յաճախ, առանց մի հիմնաւոր պատճառի բարկութեան և ուրախութեան բռնկումը. հիւանդի հայեացքը զուրկ է լինում արտայայտութիւնից և դէմքը անշարժ...

Շատ անգամ հիւանդները ականջի խշշոց ու շվիոց են ունենում, դանդաղանում են, թէ աչքերի առաջ շրջաններ, կայծեր են երևում:

Հիւանդները զգում են մարմնի վրայ մրջիւնների սողումն, ձեռքերի, ոտների կամ մի քանի մասների թմրութիւն և այլն:

Եթէ մինչև անգամ գլխապտոյտը դադարում է, այնուամենայնիւ հիւանդը լինում է մշտական ահ ու երկիւղի մէջ, թէ նա կրկնուելու է:

Դրու թիւնը անտանելի է մանաւանդ այն դէպ-
քերում, երբ հիւանդը ստիպուած է յարել իր ուժե-
րը, կամ ջանքեր անել, օրինակ որոշ ուղղութեամբ
քայլելու, կամ օտար մարդու հսկողութեան տակ
մի որևէ գործ կատարելու և այլն:

Այսպիսի դէպքերում յիշողութիւնը միշտ թու-
լացած է լինում:

Այս տեսակ զրու թեան (զիտակցութեան խան-
դարման) ուղղակի հետևում են կարկամումներ, մինչև
անգամ ընկնաւորութիւն (էպիլեպսիա):

Ասենք ի դէպ, որ ընդհանրապէս վնասուում են
գլխի մի կէսի տեսողական ներվը և աչքերի մկա-
նունքների ներվը:

Դեռ անուանի Ռիկորը աչքերի ներվերի կաթ-
ուածահարութիւնը անուանեց «սիֆիլիսի ստորա-
զրութիւն»:

ԺԳ.

Մրանդութեան և գլխի պտոյտից անմիջապէս
յետոյ կամ նրանց յայտնուելուց երկու-վեց ամիս
կամ աւելի անցած՝ կարող են պատահել մասնաւոր
վազանցուկ պարէլէլ (անկատար կաթուածներ) և
կաթուածներ:

Շատ անգամ այդ կաթուածները առաջ են գալիս
զիտակցութեան բոլորովին հաստատուն ժամանակ

և հիւանդի բոլորովին հանդիստ ու անվրդով միջոցին:

Հիւանդը ինքն է ցոյց տալիս, թէ իր այս ինչ
անդամը կաթուած է ստացել. օրինակ՝ լեղուն,
ձեռք, ոտք, աչքի կոպերը և այլն:

Միևնոյն ժամանակ հիւանդը զգում է ընդ-
հանուր շարդուածութիւն ու թուլութիւն:

Այդ տեսակ կաթուածները արագ վրայ են
գալիս, արագ էլ անցնում:

Ամենից շատ լեղուն է բռնուում, որով հիւան-
դը յանկարծ զրկում է խօսքեր արտասանելու
ընդունակութիւնից և կարողանում է միայն քառապէս:

Մի քանի վայրկենից կամ ըսպէից յետոյ՝ հի-
ւանդը նորից սկսում է խօսել կանոնաւորապէս,
կարծես ոչինչ պատահած չլինէր:

Երբեմն հիւանդը զրում է կամ կարգում է մի
որևէ բան, յանկարծ նրա ձեռքից վայր է ընկնում
առարկան. նա կամենում է նորից վերցնել, բայց
կամքը անզօր է լինում: Նա տատանուում է և չի
վերցնում և մի քանի վայրկեան միայն անցած՝
կարողանում է զսպել իրան և ցանկացածն անել:

Մինչև անգամ լինում են դէպքեր, երբ հիւան-
դը յանկարծ վայր է ընկնում և մի քանի ըրպէ
շարունակ չի կարողանում վեր կենար, բայց յետոյ
ամեն բան նորից կարգի է ընկնում:

Ուրիշ դէպքերում կաթուածները աւելի սաս-

տիկ և երկարատե են լինում, տեւում են մի քանի ժամ, մինչև անգամ շաբաթներ:

Շատ անգամ այս տեսակ բաւական երկարատե կաթուածների թւում յայտնւում է աչքի կոպի ցած գալը — «պտօղիս»:

Հիւանդի կեանքի համար ամեն մի բուպէն թանկ է այդպիսի դէպքերում: անհրաժեշտ է խիստ, երկար և կրկնողական բժշկութիւն թէ եօղոյի, թէ սնդիկով և թէ բժշկական այլ խորհուրդներով:

Հարկաւոր է շատ լուրջ բժշկութիւն, եթէ մէկը առաջ ժամանակ է կորցրել կամ վատ է բժշկուել . . .

Երբ որ սիֆիլիսով վարակուեցար, պէտք է բժշկուես, կուուես ու յաղթես այդ սարսափելի թշնամուն

ԺԴ.

Բացի վլխացաւից, սրանեղութիւնից և դիսի պտոյաից սիֆիլիսը կարող է առաջացնել և ընկնաւորութիւն — էպիլեպսիա:

Ի՞նչ բան է իսկապէս ընկնաւորութիւնը:

Այս հիւանդութիւնը քրոնիքական ու ծանր ցաւ է. դժբաղդաբար նա բաւականին յաճախ է պատահում: ամեն մի աստիք (պրիպատոկ) բաղկանում է զիտակցութեան յանկարծակի շքանալուց և

այն ընդհանուր ցնցումներից, որ աեղի են ունենում մարմնի շատ մկաններում:

Ընկնաւորութիւնը լինում է զանազան տեսակ, նայելով թէ ի՞նչ պատճառներից է ծագել:

Այստեղ էլ ամենամ.ժ գերը խաղում է ժառանգականութիւնը:

Քիչ չի պատահում տեսնել ժառանգականութեան ուղղակի փոխանցումը սերունդի վրայ, այսինքն՝ երբ ընկնաւոր ծնողները ծնում են ընկնաւորութեան տրամադիր երեխաներ:

Աւելի յաճախ պատահում է, որ նեարդային սխտեմի ծանր հիւանդութիւններից փնասուած, ինչպէս օրինակ՝ հոգեկան քայքայումներից, ծնողների կամ ազգականների սերունդը նոյնպէս տրամադրութիւն է ցոյց տալիս էպիլեպսիայով հիւանդանալու:

Այն ընտանիքներում, որտեղ կան հոգեկան հիւանդներ, այնտեղ ծնւում են ընկնաւոր երեխաներ:

Շատ յայտնի դեր է խաղում այս բանում ծնողների երկարատե արբեցութիւնը. այդպիսի ծնողներից լինում են ընկնաւորութեան ենթակայ երեխաներ:

Բազմութիւ զիտողութիւնները բժշկականութեան մէջ ցոյց են տալիս, որ բաւական է մինչև անգամ յղութեան դէպքում հօր մի անգամ արբած դրութեան մէջ լինելը, որպէսզի ծնուի ընկնաւորութեան հակումն ունեցող երեխայ:

Պէտք է ուրեմն զարմանալ, որ այն ընտանիքներում, որտեղ 5-6 առողջ երեխաներ կան, մէկն յանկարծ լինում է ընկնաւոր. նշանակում է մայրը նրան յղացել է արբաժ ամուսնու մերձաւորութեան միջոցին:

Բայցի ժառանգականութեան ազդեցութիւնը՝ այս հիւանդութիւնը կարող է լինել և ստացական:

Շատ անգամ մանկական հասակում սեռական անդամների վաղ ու չափազանց զրգուով, վաղ հասակում սկսած օնանիզմը և ներաստենիկ ծնողներից սերուելը նպաստում են ընկնաւորութեան:

Մեծ մասամբ այս հիւանդութիւնը յայտնւում է երեխաների վրայ և պատանեկական հասակում մինչև քսան տարեկան, իսկ մարդու հասունութեան ժամանակ հազիւ է երևում:

Լինում է և այսպէս. հիւանդութիւնը սկսում է մանկական հասակում, յետոյ մի առժամանակ դադարում, իսկ յետոյ նորից երևան է դալիս մարդու հասակն առած շրջանում:

Կայ և անդրադարձական — րեֆլեկտուսի — ընկնաւորութիւն, որինով՝ նեարդի տեղում առաջացած սպիւր, զանազան վիրաւորումներից, լինում են և մի քանի ներքին հիւանդութիւններից և ճճուներից:

Հասկանալի է որ ընկնաւորութիւնը այնպիսի

մարդկանց մէջ է զարգանում, որոնք նախապէս տրամադրուած են լինում:

Սյոբ հիւանդութիւնը զարգանում է մինչև անգամ զանազան վնասումների ժամանակ, օրինակ՝ զանդնի ոսկրների շարդուելուց, նեարդային քայքայումների միջոցին և գլխի ուղեղի հիւանդութեան ժամանակ:

Առհասարակ ընկնաւորութիւնը, ինչպէս ասացինք, ներկայացնում է քրոնիկ հիւանդութիւն, որ երևում է մի երկար շարք աստիքներով, մէջ ընդ մէջ, երբեմն շատ, երբեմն քիչ աղատ ընդմիջումներով:

Շատ դէպքերում, նախ քան բնորոշ ընկնաւորութեան երևումը, յայտնւում են նրա կանխանշանները:

Սյոբ կանխանշանները երբեմն յայտնւում են աստիքների երևումից առաջ և ընդհանրապէս կայանում են հեռեւեարում. հիւանդն զգում է թուլութիւն, շարդուածութիւն, հոգու շատ վատ տրամադրութիւն, գլխի ծանրութիւն, վատ քուն և այլն:

Աւելի կարևոր են այս դէպքում արտաքին նախընթաց կանխանշանները, որոնք կոչւում են

Սյոբ զանազան աեսակ երեղծները շատ կործատե են լինում. կրծքի դիպի տակ, ձեռքի ու ոտքի ծայրերում, սրտի մօտերը յայտնւում է մի շփում նման թեթև քամուց առաջացած շփումին,

սաքի ու սառի զգացում, մի քիչ ցաւ և այլն:

Զգացողութեան բնորոշ զիծը կայանում է նրանում, որ սկսելով մարմնի մի մասում, նա արագ բարձրանում է վերև՝ դէպի գլուխը և դեռ տեղ չհասած, յանկարծ տեղի է ունենում աստիքը, այսինքն՝ զիտակցութեան կորչումը:

Այլ դէպքերում այդ զգացողութիւնները յայտնուում են բարձր զգայարանների շրջանում, բոցի տեսակ կարմիր բծեր, կլորակներ, երբեմն էլ երևում են նրանք լոտոսիան, հոտոտելիքի և ճաշակելիքի զգայարաններում:

Երբեմն էլ այդ կանխանշանները երևում են տխրութեան կամ վախի զգացումով այնքան սարսափելի, որ հասցնում է մինչև անզամ սոսկալու աստիճանին և կամ մինչև հալուցիկացիա:

Լինում է երբեմն տաքութեան զգացողութիւն, կարմրութիւն, սաստիկ քրտինք, կամ ընդհակառակն ցրտի և զունատութեան զգացում և այլն:

Գիտակցութեան յանկարծակի և ամբողջովին չքանալովը յայտնուում է իսկական հիւանդութիւնը:

Հիւանդը ընկնում է որտեղ և ինչպէս պատահում է և շատ անզամ մնասում է իրան, վերքեր և շարքուածքներ ստանալով:

Գիտակցութեան կորսուելու հետ սկսում են ցնցումներ, որոնք դեռ չսկսուած՝ հիւանդն անզիտակցաբար արձակում է մի անսովոր ուժգին բզաւոց:

Ցնցումները սկզբում լինում են ասնխական, այսինքն՝ հիւանդի ամբողջ մարմինը քաշքշուում է, երեսի զծերը լարուած են լինում, կերպարանքը անշարժ, դէմքը գունատ, շնչառութիւնը կանգ է առնում և մի այդպիսի զրութիւն տևում է կէս ըոպէից մինչև մի ըոպէ:

Յետոյ սկսում են կշնխական ցնցումներ, այսինքն՝ երեսի մկաններում երևան են գալիս խիտ և ուժգին ձգձգումներ, աչքերը կիսաբաց են մնում և խաղում են անզիտակցաբար, բիբերը քիչ լայնանում են, ներքին ծնօտը խաղում է աչ ու ձախ՝ մի կողմից միւսը, ատամները կոտրուելու չափ կրճտուում են, և քանի որ կուլ տայն անհնաբ է դառնում՝ բերնի անկիւններում երևում է փրփուր. փրփուրը երբեմն արիւնխտան է լինում, որն առաջանում է լեզուի կծուելոց:

Միւսոյն ժամանակ պարանոցի մկանների ցնցումից գլուխը թափ է տրւում և ուժգին խփում է այնտեղին, որտեղ ընկել է հիւանդը, ձեռքերը և ոտքերը արագ շարժումներ են անում և խփում այս ու այն կողմը:

Երբեմն պատահում է, որ հիւանդը անզիտակցաբար միգում է, տեղն է աղտոտում, իսկ եթէ տղամարդ է, երբեմն հոսում է և սերմը:

Մի 5-10 ըոպէից յետոյ հիւանդը հետզհետէ հանդստանում է և կարծես սկսում է մրտափել:

Աստիքից յետոյ Հիւանդը սովորաբար իրան զգում է շարդուած, ցաւում է ամեն տեղը, լեզուն կծոտուած է լինում, երեսի վրայ երևում են կարմիր կէտեր և աչքերը լցուած են լինում արիւնով:

Այս է ահա սովորական ընկնաւորութեան սաստիկ աստիքը իւր ամբողջութեամբ, իւր բոլոր ուժով. նա, ի հարկէ, միշտ այսպէս խիստ չի լինում, այլ յաճախ աւելի թոյլ կերպարանք է ստանում:

Ի դէպ պէտք է ասել, որ զործնական տեսակէտով աւելի հետաքրքրական են սովորականից տարբերուող այն ընկնաւորական նշանները, որոնք զլսաւորապէս կապ ունին հոգեկան զործունէութեան փոփոխումների հետ:

Բացի դիտակցութեան վերին աստիճանի բթացումից՝ երեան են գալիս ծանր, ճնշող զգացումներ — փսխ, սարսափ, տխրութիւն, և որոնց աղդեցութեան տակ առաջ են գալիս պէս-պէս սարսափելի և աւերիչ գործողութիւններ — կտորել ամեն բան ինչ որ պատահում է, սպանել առաջին հանդիպած մարդուն և այլն:

Այդպիսի աստիքը շարունակուում է մի քանի րոպէ. երբ զրութիւնը փոխուում է դէպի լաւը և հիւանդը խելքը դուրսն է հաւաքում, նա սարսափած տեսնում է այն՝ ինչ որ արել է անզգայաբար, հասկա-

նարով չկարողանալով իրան հաշիւ տալ, թէ այդ ինչպէս է պատահել, ինչու է այդպէս արել. նա ոչինչ չէ յիշում:

Ո՞վ է մեղաւորը:

Այդ տեսակ յանցագործին հիւանդանոց է հարկաւոր, և ոչ թէ բանա:

Այլ բան է, եթէ մեր բանտերը ծառայէին որպէս բարոյականութեան հիւանդանոցներ:

Ընկնաւորութեան աստիքների յաճախութիւնը շատ դանազան է լինում. մի քանի հիւանդներ տարուայ մէջ մէկ կամ երկու անգամ են ընկնում, ոմանք շաբաթը մի անգամ, իսկ կան այնպիսիները, որոնք ընկնում են օրը մի անգամ, մինչև իսկ օրը մի քանի անգամ:

Հիւանդութեան սկզբում աստիքները ուշ ուշ են պատահում, բայց յետոյ սկսում են երեւալ աւելի յաճախ, այնուամենայնիւ որոշ կանոնաւոր ժամանակակէտ չունին:

Քանի առաջ է դնում հիւանդութիւնը, այնքան առաջ է դնում և քայքայումը, և քիչ չէ պատահում, որ հիւանդը հասնում է մտաւոր ընդունակութիւնների կատարեալ թուլացման, մինչև անգամ խելագարութեան:

ԺԵ.

Ինչպէս է լինում ընկնաւորութիւնը ուղեղի սիֆիլիսի ժամանակ:

Բազմաթիւ դէպքերում ընկնաւորութեան ժամանակ հիւանդները չեն կորցնում զիտակցութիւնը և զգացողականութիւնը, երբեմն զիտակցութիւնը լինում է բթացած, իսկ սակաւ դէպքերում միայն նա իսպառ չքանում է:

Երբեմն միևնոյն հիւանդի մէջ զիտակցութիւնը բոլորովին տեղն է մնում, մի անգամ թուլացած է լինում, իսկ մի ուրիշ անգամ արդէն լիովին բացակայում է:

Սիֆիլիսական էպիլեպսիայի մի ուրիշ նշանն էլ այն է, որ շատ անգամ ցնցումներն յայտնւում են ոչ ամբողջ օրգանիզմով, այլ կէս մասում, կամ մինչև անգամ մարմնի մի որևէ մասում:

Առհասարակ ցնցումները մի անգամից չեն հարուածում ամբողջ օրգանիզմը, այլ մի կէտր աւելի, քան թէ միւսը:

Սիֆիլիսական ընկնաւորութեան մի քանի դէպքերում, աստիքների վերջանալուց յետոյ, ցնցողական կծկումների ենթարկուող օրգանիզմի առանձին մասերում՝ յաճախ մնում են թուլացման հետևորդական երևոյթները՝ «շարժողականութեան կաշկանդումը» — պարէններ, կաթուածներ և այլն:

Այս հետևորդական երևոյթները կամ շուտով անցնում են, կամ մնում են մի առժամանակ:

Սիֆիլիս ունեցող մարդկանց ընկնաւորութեան դէպքերը զիտելով՝ տեսնում ենք, որ ընկնաւորութիւնը նրանց մէջ երկու տեսակ է լինում՝ ժառանգական և ստացական:

Մենք զիտենք, որ ժառանգական սիֆիլիսը կարող է լինել զանազան կերպ. այս կերպերի մասին մենք (սօսել ենք մեր միւս զրքոյկներում*):

Եթէ մի կողմ թողնենք ժառանգական սիֆիլիսի այն դէպքերը, որոնք առաջ են բերում ուղեղի մէջ պատալօղի — անատոմիական խիստ փոփոխութիւններ, և կանգ առնենք նրա, այսպէս ասած՝ պրակերպուած, փոխակերպուած տեսակի վրայ, կտեսնենք, որ ժառանգական սիֆիլիսի պատճառով յայտնւում են ներվային հիւանդութիւնների շատ տեսակներ, ինչպէս ընկնաւորութիւն, խօռէա և այլն:

Այդպիսի մարդկանց ուղեղը հանդիսանում է թուլակազմ ու արտաքին ներդործութիւններին թոյլ զիմադրող:

Թուլութեան և անկարողութեան այս հօդի վրայ կարող են զարգանալ ամեն տեսակ հօդեկան

*) Տես բժ. Ա. Բուրդուղեան. «Ժառանգականութիւն և դաստիարակութիւն», «Սիֆիլիս» Բ. տպագր., «ՌՎ է յանցաւորը»:

Հիւանդութիւններ (պսիխոլ և նեվրոլ):

Այսպիսով ուղեղային ժառանգական սիֆիլիսը ստեղծում է Հիւանդութեան նախատրամադրութիւն:

Իսկ թէ ինչ կերպարանք է ընդունում այդ Հիւանդութիւնը, դա կախուած կլինի ուրիշ ժառանգական կամ պատահական կենսական պայմաններից:

Պարզաբանելու համար պէտք է նկատել, որ ժառանգական սիֆիլիսի ժամանակ մի հանդամանք առանձնապէս մեծ նշանակութիւն ունի զլխի ուղեղի Հիւանդութիւնների մէջ, այն է, որ մանկական մասաղ հասակում հէնց ուղեղի Հիւանդանալուց կանգ է առնում և նրա զարգացումը:

Հիւանդութիւնը սովորաբար վնասում է այստեղ դեռ նոր զարգացող գործարանը և զրանով կանգնեցնում է նրա զարգացման ընթացքը ամբողջութեամբ կամ մի մասով:

Այդ դադարումը կայանում է զլխաւորապէս հոդեկան գործունէութեան անբաւարար զարգացման մէջ. ծայրայեղ թուլամտութիւնը ամենից աւելի երևացող հետեանքն է բնածին-սիֆիլիսոտի:

Այստեղ էլ ահա յաճախ Հիւանդութիւնն սկսում է ընկնաւորական դէպքերով, որոնք մեծ մասամբ հետեւում են զլխացաւին, զլխի պոռոյաին, ականջների վժժոյցին, բնաւորութեան փոփոխութեան և խելք ու սաքի թուլացման:

Մի քանի դէպքերում ընկնաւորութիւնը երկար տարիներ մնում է իբրև սիֆիլիսի միակ նշանը — սիմպտոմը, իսկ շատ դէպքերում նա ժամանակի ընթացքում կորչում, անհետանում է, մինչդեռ այլ երևոյթները, մանաւանդ բանականութեան անկումը առաջին տեղն են զբաւում:

Այս ամենի շնորհիւ երեխաները վերջ ի վերջոյ դառնում են կատարեալ կաթուածահար ապուշներ:

Այբպիսի երեխաներ քիչ չեն քաղաքներում և գիւղերում. ծնողներն ասում են՝ «Աստու պատիժ է»:

Ո՛չ այդ Աստուծու պատիժ չէ, այլ ծնողների մեղքն է. ալիոհոլիզմը և վատ բժշկուած սիֆիլիսը կարող են առաջ բերել այդ տեսակ ծանր հետեանքներ — սերնդի, ցեղի այլասերումն ու անհետացումն . . .

Ժ.Զ.

Գլխի ուղեղի սիֆիլիսի միջոցին լինում են և կաթուածահարութեան նշաններ, որոնք համարեա թէ չեն զանազանւում կենդրոնական նեարգային սիստեմի այլ Հիւանդութիւններից առաջ եկած կաթուածներից:

Աւելի յաճախ սիֆիլիսական անդամալուծութիւնը երեւում է իբրև կիսակաթուած — հէփայեֆիան, մանաւանդ աշակողմեանը:

Յետոյ երևում են մենակաթուածներ — ճշուպի-
բնան, ինչպէս օրինակ՝ պտօղիսը (աչքի կոպի ցած
դալը), ձեռքի կաթուածը և այլն:

Սյուպիսի կաթուածները կարող են առաջ դալ
փաստուած անօթների պայթումից, ուղեղի մէջ
արիւն թափուելուց, էմբօլիայից, րբօմբօլիայից և առան-
ձին բուժմանն ուղղուելուց (սիֆիլիսի երրորդ
շրջանը կոչուում է գումմային):

Ինչպէս վերեր ասել ենք, սիֆիլիսական հաս-
տատուն կաթուածներից առաջ երևում են նրա
կանխանշանները, նման ուղեղի սիֆիլիսի սկզբնական
նշաններին — դլխացա, սրտնեղութիւն, գլխի պտոյա
և այլն:

Ամենաառաջին կանխանշանը լինում է մի որևէ
անդամի անդղայութիւնը, մտղուկների սողացումը և
վաղանցուկ կիսակաթուածները:

Սիֆիլիսական կաթուածի ընթացքի արագու-
թիւնը լինում է ոչ բոլորովին միատեսակ, երբեմն
վրայ է հասնում յանկարծ, երբեմն էլ կամայ - կամայ
ու հետզհետէ:

Կաթուածների միջոցին ուղեղի մէջ արիւն
թափուելու պատճառով անդամայութեանը դառ-
նում է յանկարծակի:

Բոլորովին դանդաղ և կամայ - կամայ է դալիս
անդամայութեանը այն դէպքերում, երբ որ նա

դարգանում է շարունակաբար անօթների ծակօսի-
ների ոչնչանալուց, խանդարումից:

Համարեա այսպէս դանդաղ և կամայ - կամայ
են դարգանում կաթուածները գումմի կազմակեր-
պուելու պատճառով:

Սյս կաթուածները շատ հեշտ են բժշկուում
և մի քանի դէպքերում իրանցից յետոյ ոչ մի հետե-
ւանք չեն թողնում, իսկ այլ դէպքերում առաջ են
դալիս սպիւներ, որով ընդ միշտ անդամայութեանը
նր մնում է:

Սիֆիլիսական հեմիպլիգայի (միակողմանի ան-
դամայութեան) մասին բաւական խօսեցինք:

Սյսանդ էլ ահագին նշանակութիւն ունի կա-
նոնաւոր կրկնողական և երկարատե բժշկութիւնը,
որպէս քիչ թէ շատ նախադրուչացում ամեն տեսակ
կաթուածներից:

Սյթմ համառօտակի նայենք ցնորամտութեան
առաջընթաց կաթուածազարութիւնն ու տարեսը
(սպիւննայեա սուխտակա):

Ժէ.

Վերին աստիճանի նշանաւոր դեր է խաղում
առաջընթաց կաթուածազարութեանն առաջ պալուն
մէջ սիֆիլիսը:

Հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ կաթուածների հիւանդաբանութեան (անամնեզ) մէջ 70 տոկոսը հիւանդիւնների՝ հիւանդութեան երեւումից 7-15 տարի առաջ ունեցել են սիֆիլիս:

Այս հանգամանքը առիթ է տալիս մի քանի բժիշկ զիտնականներին կարծելու, որ առաջընթաց կաթուածազարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սիֆիլիսի ուշացած աստիքներից մէկը:

Իսկ ուրիշները դէմ են այս կարծիքին և առաջընթաց կաթուածազարութեան ծագման գործում սիֆիլիսին ոչ մի նշանակութիւն չեն տալիս, հիմնուելով զլիսաւորապէս այն բանի վրայ, որ հակասիֆիլիսական բժշկութիւնը ոչ մի էական օգուտ չի տալիս:

Այսպէս ուրեմն առաջընթաց կաթուածազարութիւնը սիֆիլիսական հիւանդութիւն չէ, այլ սիֆիլիսը լինում է նրա առաջ գալու զլիսաւոր պատճառը:

Հաւանական է, որ սիֆիլիսը օրգանիզմում թողնում է մի քանի ծանր հետքեր, թոյներ (տոկսին)՝ նեարդային սխտեմի, ինչպէս և զլիսի ուղեղի սննդառութեան վրայ ազդող:

Այդ պատճառով էլ զլիսի ուղեղի զիմացկունութիւնը հիւանդութիւնների դէմ սկսում է նուազել և այնպիսի մոմենտներում, ինչպէս յոգնածու-

թիւնն է, պէտք է, որ աւելի այդ տեսակ ուղեղի վրայ ազդէ, քան թէ ուրիշ տեսակի:

Նրա համար էլ, սիֆիլիս ունեցող փաստաբանի, հաշուապահի, դործարանատիրոջ, իրանց պարապմունքի ազդեցութեան տակ՝ զլիսի ուղեղի թուլացման նշանները պէտք է որ անհամեմատ շուտ երևան, քան սիֆիլիս չունեցողներինը:

Նրանից է, որ սիֆիլիս ունեցողների այդ տեսակ հանգամանքները, ինչպէս սաստիկ մտաւոր յոգնածութիւնը, բարոյական հարուածները, անվայել ու անբարոյական կեանքը, յաճախ առաջընթաց կաթուածազարութեան երևալուն նպաստում են:

Մի քանի դէպքերում, ըստ երևոյթին, իրանք՝ նեարդային դործարանի (ապպարատ) վրայ մնացած հետքերը տարեցտարի, հետզհետէ մեծանում են, մոնաւանդ այն մարդու մէջ, որը վատ է բժշկուել, կամ բոլորովին չէ բժշկուել, աւելի և աւելի ներդործում են նեարդային սննդառութեան վրայ և մի տասը տարուց աւելի կամ պակաս բուականին նպաստում են զլիսի ուղեղում այն փոփոխութիւնների առաջ գալուն, որոնք առաջընթաց կաթուածազարութեան հիմքն են կազմում:

Այսպէս ուրեմն՝ կրկնում ենք, որ թէև առաջընթաց կաթուածազարութիւնը սիֆիլիսական հի-

անդուծիւն չէ ըստ երևոյթին, այլ զոնէ շատ
դէպքերում սիֆիլիսի հետ անմիջական կապ ունի:

Յամենայն դէպս, կասկած չկայ, որ միայն սի-
ֆիլիսը չէ այդ հիւանդութեան առաջ գալու պատ-
ճառը:

Միթէ քիչ մտադիկ սիֆիլիս են ունեցել, իսկ
առաջընթաց կաթուածահարութիւնը զարգանում է
համեմատաբար շատ քչերի մէջ:

Նրա զարգացման համար հարկաւոր է և այլ
պայմանների աջակցութիւնը, ինչպէս օրինակ՝ ուղեղի
բնածին թոյլ լինելը, օգելից խմիչքների չափազանց
դործածութիւնը, սաստիկ մտաւոր յոգնածութիւնը,
բարոյական հարուածները, սեռական անզուսպ
կեանքը, դուրցէ և այլ մեզ անյայտ պատճառներ:

ԺԲ.

Այն բազմատեսակ ախտանշանները, որով ար-
տայայտուում է առաջընթաց կաթուածահարութիւ-
նը, կարող են զանազան տեսակ ձևերով երևալ:

Ինչպէս ընդհանուր կանոն՝ նախ ասենք, որ
առաջընթաց կաթուածահարութիւնը, ինչպէս
անունն էլ ցոյց է տալիս, զարգանում է կամաց-կա-
մաց, բայց միշտ առաջ ընթացող, միշտ աճող ու
սաստկացող:

Հիւանդն ընկնում է վերին աստիճանի զգայուն,
տպաւորուող և զրգոսւած զրութեան մէջ:

Մինչև անգամ չնչին դէպքերն էլ սկսում են
նրան յուղել, լրագիր կամ գիրք կարդալիս նա լաց
է լինում, միենոյն ժամանակ նա հակուած է դէպի
անզուսպ բարկութիւն և բարկանում է առանց մի
հիմնաւոր պատճառի:

Հիւանդը նկատում է, որ մինչև անգամ իւր
սովորական պարապմունքն էլ իրան դժուարութիւն
է պատճառում:

Նրա հոգին ու միտքը կանգնում է, նա հազիւ
կարողանում է յիշել լաւ ծանօթ առարկաները,
այն էլ ոչ միշտ. մի նոր բան միտքը պահելը դար-
ձեալ նրա համար մեծ դժուարութիւն է:

Այս ամենի հետ սովորաբար առաջ է գալիս
բաւական զգալի անքնութիւն, զլխացաւութիւն,
զլխի ծանրութիւն:

Այստեղ յաճախակի լինում է նաև անզար
(միգրէն), որ վերին աստիճանի բուռն է լինում և
բժշկական ոչ մի միջոցի չի ենթարկուում:

Պարզ բան է այս ամենը անդրադառնում է
հիւանդի տրամադրութեան վրայ. նա դառնում է
մռայլ, տխուր և հակուած դէպի օխոնկանտութիւն
(խլոխոնկրիա), յաճախ իւր առաջընթացող և
զաաներով զխմում է բժշկի:



Հիւանդն առժամանակ հանդստանում է, հան-
դստանում են և նրա մերձաւորները:

Բայց այդ աւելում է ոչ երկար. հազիւ անցնում է
մի քանի շաբաթ, շատ-շատ մի քանի ամիս և ահա
նախկին ախտանշանները դարձեալ երևում են, բայց
այս անգամ աւելի մեծ ուժով:

Այս տեսակ կրկնողութիւններ կարող են երե-
ւիլ մի քանի անգամ, մինչև որ բոլոր երեղթները
կտանան բաւարար ամրութիւն և դարգացում:

Արիւնը գլուխը թռնելը առաջ է դալիս շատ
հեշտ և դանաղան հանգամանքների ազդեցութեան
տակ:

Տողեկան վրդովմունքները, գինու մի աւելորդ
բաժակը առաջ են բերում արիւնալիութիւն դէմքի
վրայ և աչքերի մէջ:

Գլուխը շուտ-շուտ պտոյտ է դալիս և մինչև
անգամ լինում են վաղանցուկ ուշագնացութիւններ:

Այս ամենի հետ շատ վաղ զուգընթացաբար
տեղի է ունենում տեղ ու ժամանակ որոշելու ըն-
դունակութեան թուլացումն:

Հիւանդը շրջապատող պայմանների ազդեցու-
թեան տակ կորցնում է շուտով կենդրոնացման ըն-
դունակութիւնը, չի կարողանում գտնել իրան բա-
ճանօթ փողոցը, ուրիշի բնակարանը իրանի տեղն է
ընդունում, ներս է մտնում ինքնիշխան կերպով

և կարգադրութիւններ անում այնտեղ, յերեկը դի-
շեր է համարում և ընդհանաւոր:

Եկեղեցի մտնելիս չի վերցնում գլխարկը, յայտն-
ւում է հասարակութեան մէջ, կանանց շրջանում
ամենաանփոյթ և անպատշաճ կերպով հագնուած,
և երբ նրա ուշադրութիւնը հրաւիրում են այդ
տեսակ տարօրինակ վարմունքների վրայ, նա չի
հասկանում, թէ ինչ կայ այստեղ անյարմար կամ
անվայել:

Շուտով երևում է նաև քննադատելու և դա-
տելու ընդունակութեան թուլացումն, մանուաւնդ
բարոյագիտական և դեղեցկագիտական (էտիկայի և
էստէտիկայի) զգացմունքի բթացում:

Վերջինս աւելի ակնյայտնի է դառնում, երբ որ
սկսում են դնահատել հիւանդի ամբողջ վարկը, նրա
յայտնած հայեացքները:

Այստեղ երևան է դալիս, որ մարդը շատ ու-
շատ փոխուել է, և որ գլխաւորն է, փոխուել է
դէպի վատը:

Առաջ բարձր դիրք բռնող հասարական գործիչը,
իւր գործին նուիրուած ժրտջան պաշտօնեան, օրի-
նակելի ընտանիքատէրը, միշտ իւր պատիւն ու բա-
րի անունը թանկ դնահատողը սկսում է անփոյթ
վերաբերուել դէպի մինչև այն ժամանակ սուրբ
համարուած պարտականութիւնները, չի մասնակ-
ցում այլևս այն գործերին, ինչ որ առաջ նրան

դբաղեցնում էին, իւր մերձաւորներն զրուծիւնով
համարեա չի հետաքրքրում, դառնում է աւելի
կոպիտ և նեղ ետասեր:

ԺԹ.

Այսպէս փոխուում է մարդու հոգեկան կերպարանքը և այդ փոփոխումը աւելի ակնյայտնի է դառնում այն ժամանակ, երբ հիւանդութիւնը հասնում է իւր բարձր զարգացման:

Մուսլ ու թմրած զրուծիւնը, հոգու անգործութիւնը, ճնշուած տրամադրութիւնը չքանում են, զրանց տեղը երևան է դալիս ինքնազգացման բարձրացումը, մի աեսակ գրգռուած զրուծիւն:

Հիւանդն սկսում է ցոյց տալ սաստիկ հակումն դէպի շարժում, դէպի գործունէութիւն:

Այսուհետև հիւանդը չամաչելով ոչնչից անձնատուր է լինում ամենալլիւրջ զգայնական գուարձութիւնների:

Նա դէն է ձգում իւր գործերը, մոռանում է ընտանիքը, ամբողջ ժամանակը անց է կացնում կասկածաւոր վարք ու բարբի տէր մարդկանց հետ և անձնատուր է լինում ցինիկական անառակութեան և դեռ շատ անգամ էլ իւր կեանքի և քեֆերի մասին չամաչելով պարզ պատմում է ամենքին:

Գլխապառոյաները, ուշադնացութիւնը դնալով աւելի յաճախ են կրկնում, երբեմն նկատուում են կաթուածական աստիքներ, որոնք սակայն շուտանցուկ են և հետքեր չեն թողնում:

Այդ ժամանակ կարելի է նկատել, որ խօսակցութիւնը և զիրը սկսում են անկապ ու կցկտուր լինելնրանց մէջ յաճախ երևում են կոպիտ սխալներ, տառերը, բառերը չլրացած, մինչև անգամ ձեռագիրը փոփոխուած:

Հիւանդի խօսակցութիւնը, մանաւանդ վրդովւած ժամանակ՝ դանդաղ է լինում և դժուար սկզբում՝ նա չի կարողանում իւր ժամանակին յիշել պահանջուելիք խօսքը և դրա համար էլ չի կարողանում հարթ ու սահուն կերպով արտայայտել իր մտքը:

Իսկ ձայնը շատ անգամ դառնում է խուլոտ ու կոպիտ:

Արդէն բաւական վաղ նկատուում է, որ նրա խօսելու միջոցին մասնակցում են այնպիսի մկաններ, որոնք խօսելու գործում ոչ մի դեր չեն խաղում. օրինակ՝ թուշը, աչքը, այնուհետև երեսն ընդունում է դիմակային, չոր կերպարանք, առանց որևէ արտայայտութեան:

Հիւանդի քարուածքը դառնում է անկանոն, տձև, ձեռքերը քիչ գողգողում են, բիբերը դառնում են անհաւասար, անկանոն նեղուած:

Այս է առաջընթաց կաթուածահարութեան տխուր շրջանի բնորոշումը, խարակտերիստիկան, այն շրջանի, որը տեւում է ամիսներ և երբեմն էլ տարիներ:

Սրան յաջորդում է հեռեեայ շրջանը, որի միջոցին հիւանդութիւնը բոլորովին լուրջ կերպարանք է ընդունում, փոխելով իւր բնաւորութիւնը:

Ի.

Այս հիւանդները դարմանալի շուայլ են դառնում և անմիա կերպով վատնում ահագին զուամարներ. մի բան զնելիս նրանք գնում են պուտերով, արկղներով կամ տասնեակներով, երբեմն էլ ամբողջ խանութներ են գնում սպրանքի հետ միասին և այլն:

Սրբեցողութեան սաստկացումը և սեռական գանկութեան աճումն այս շրջանում երևում են աւելի պարզ կերպով. հիւանդը առանց ամուսնելու վրայ է հասնում առաջին պատահող կնոջ, չինայելով մինչև անգամ իւր գաւակներին:

Առաջընթաց կաթուածահարութեան բնորոշ կողմերից մէկն էլ մեծութեան զառանցանքն է:

Հիւանդի արաայայտած վայր ի վերջ դադարները աչքի են բնկնում իրանց վերին աստիճանի Փանտաստիկ բնաւորութեամբ, իրանց անհաս-

տատութեամբ և սիստեմատիկայի կատարեալ բացակայութեամբ:

Նա իրան անուանում է Աստուած, մարգարէ, թաղաւոր և միեւոյն ժամանակ իւր մասին հաղորդում է ճիշտ տեղեկութիւններ:

Նա իւր խօսքերի մէջ ոչ մի հակասութիւն չի տեսնում, դրա համար էլ մտքերը միմեանց կապելու անհրաժեշտութիւն չի զգում:

Նրան թւում է, թէ ինքը տէր է անթիւ դանձերի ու հարստութեան, թէ նա ամեն բան գիտէ, գիտէ բոլոր լեզուները, նրա մարմինը ոսկուց է, նա սպրում է ոսկեզօծ պալատներում:

Այստեղ պարզ նկատւում է հիւանդի յիշողութեան, քննական և դատելու ընդունակութեան կատարեալ թուլացումը:

Պատահում են սակայն ընդմիջումներ, երբ ինքը՝ հիւանդը հրաժարւում է իւր ասածներից և զադարներէից. ծիծաղում է իւր զառանցանքների ու արարմունքների վրայ, կարծես թէ քիչ շատ առողջանալու նշաններ է ցոյց տալիս:

Բայց՝ վաղ թէ ուշ, դարձեալ երևան են գալիս հիւանդութեան նշանները և հիւանդը կամաց-կամաց հասնում է նախկին դրութեան:

Նկատւում են նաև դէպքեր, երբ սաստկացած զգայնութեան դրութիւնը յաջորդարար փոխւում է

Ճնշողական զրութեան և հիպոխոնդրիկ արմաղրութեան:

Ի դէպ ասենք, որ սովորական հիպոխոնդրիկը առանց որևէ հիմքի, կարծում է, թէ ինքը թոքախառնի կամ այլ զանազան ցաւեր, որ մարդս կարող է ունենայ:

Սյրպէս չէ կաթուածահար հիպոխոնդրիկը. նա համոզուած է, թէ սիրտ չունի, թէ փտել են թոքերը, եթէ փորկապութիւն ունի, արդէն թւում է, թէ ինքը դուրս չէ գնացել աասնեակ տարիներ, իւր ամբողջ կեանքի ընթացքում:

Հոգեկան աշխարհում նկատուում է յիշողութեան թուլացում, քննական և դատողական ընդունանակութիւնների ծայրայեղ նուազում:

Հիւանդը անմաքուր է պահում իրան, որպէս երեսայի՝ նրան ուրիշները պէտք է մաքրեն, կերակրեն և հագցնեն:

Սյժմ էլ հիւանդը ձգտում է զնալ ուր որ պատահի և նրա կցկտուր խօսքերից կարելի է իմանալ, որ նա շարունակում է իրան ուժեղ, մեծատուն, առողջ և այն երեւակայել:

Սյս շրջանում հիւանդութիւնը արդէն երկար չի տևում:

Յաճախ մի որևէ պատահական բարդում նրան գերեզման է տանում, երբեմն էլ հիւանդը մեռնում է ընդհանուր նուազումից ու մաշուելուց:

Սյս է ահա առաջընթաց կաթուածահարութեան, խելայնորութեան համառօտ պատկերը:

Պարզ է, որ այստեղ էլ կարող են մեծ շեղումներ պատահել:

Գժբաղդաբար սնդիկը և եօղը ոչ մի օգուտ չեն տալիս և մինչև անգամ՝ աւելի ծանրացնում են հիւանդութիւնը, ինչպէս դեռ տաս ասարի առաջ ցոյց տուեց յայանի պրոֆեսոր Տառնովսկին:

ԻԱ.

Յաճախ դժուար է լինում որոշել առաջընթաց կաթուածահարութիւնը՝ այսպէս ասած՝ ուղեղային սիֆիլիսից:

Սովորաբար սիֆիլիսի այն տեսարանները, երբ «երկրորդական նշանները» — մարմնի վրայ, ափերում դուրս տալը, կոկորդում և յետոյքում վերքեր, պապուլներ — միշտ պարզ չեն երևում, և երբեմն էլ մինչև անգամ բացակայում են, վերջանում են նեարդային սիստեմի և ուղեղի սիֆիլիսով:

Շատ հիւանդների հիւանդութեան պատմութիւնը խճճուած է լինում, որովհետև նրանցից շատերը վնեճական ախտերով, կամ սիֆիլիսով հիւանդանալիս յաճախ վտղ են տալիս մի բժշկից միւսի մօտ, զրա համար էլ թէ բժիշկների և թէ հիւանդների մօտ հիւանդութեան պատմութիւնը լրիւ արձանագրուած չի լինում:

Շատ նշանաւոր է այն բողոքն, երբ բժիշկը ղնուում է իւր դեաղնոցը «սկզբնական սիֆիլիսական խոց» կամ հին աերմինով «կարմիր շանկրը»:

Բժիշկը սովորաբար նախազգուշացնում է իւր հիւանդին, որ անհրաժեշտ է կրկնողական բժշկութիւն, զլիսաւորապէս սնդիկով և եօղով մօտ հինգ տարի:

Հարկ չկայ ասել, որ այստեղ շատ բան է կատուած բժշկի բարեհայեցողութիւնից, զիտութիւնից և տաղանդից:

Հիւանդն անպայման պէտք է բժշկուի այն բժշկի մօտ, որին հաւատում է և հիւանդի ու բժշկի մէջ պէտք է լինի բարոյական, անկեղծ յարաբերութիւն. այդպիսի պայմաններում սիֆիլիսի բժշկութիւնը քիչ շատ յաջող ու կանոնաւոր առաջ կդնայ:

Բժիշկը կկարողանայ ժամանակին թեթեւացնել, հեռացնել հիւանդութեան ծանր երևոյթները և ապագայում ահռելի բարդութիւնները:

Հիւանդը ինքն էլ նոյնպէս պէտք է զրի իւր հիւանդութեան պատմութիւնը. չպէտք է մոռանայ, որ սիֆիլիսը ծանր հիւանդութիւն է և մի մեծ դժբաղդութիւն, հետևապէս հարկաւոր է լուրջ բժշկութիւն, իսկ թոյլ վատ կամ կիսատ բժշկուած հիւանդութիւնն անցնում է հետևորդ սերունդին:

Երբ հիւանդութեան բժշկութիւնը դրուած է, անային բժշկին անհամեմատ հեշտ կլինի հետևել

այն երեխաների առողջութեան, որոնց ծնողը մի ժամանակ ունեցել է սիֆիլիս:

Այս փոքրիկ շեղումը անելուց յետոյ՝ ասենք, որ ուղեղային սիֆիլիսի երևոյթները արտայայտուում են մարդու թէ՛ հոգեկան և թէ՛ ֆիզիքական կեանքում:

Որպէսզի ասածներս նորից չկրկնենք, բաւականանում ենք այստեղ մի քանի խօսքով միայն:

Հիւանդի մօտի մարդիկը և երբեմն ինքն էլ՝ հիւանդը նկատում են, որ նրա եռանդը համեմատաբար պակասում է, դէպի կեանքն ու դործերը ունեցած ինտերեսը չքանում է և մի տեսակ թմրած ու անտարբեր դրութիւն է գալիս նրա վրայ:

Այն՝ ինչ որ առաջ վրդովում էր նրան, այլ ևս չէ հետաքրքրում:

Նրա կրօնական և բնտանեկան սկզբունքները ընկնում են և առաջ են գալիս նրա մէջ կենդանական եաստիւրութիւն և անամօթութիւն իրանց բոլոր ոյժերով:

Երբեմն նկատելի են լինում բարկութեան անհամեմատ բռնկումներ, անհիմն տխրութիւն կամ երեխայական ուրախութիւն:

Հիւանդները երբեմն էլ դառնում են շուայլոզ և անհոգ նիւթական խնդիրներում:

Շատ անգամ նրանց մտածողութիւնը և բմբնողութեան ընդունակութիւնը նուազում է, ուշադրութեան թուլացում, մոռացկոտութիւն առաջ է

գալիս. մի խօսքով հիւանդը ամեն բանում հոգեպէս
և ֆիզիքսպէս տկարանում է:

Գրգռուած դրուժեան միջոցին հիւանդի ձեռ-
քերը դողդողում են, խօսակցութիւնը լինում է ծանր
և անկանոն, դէմքը անշարժանում, փայտ կտրում
և եթէ լաւ դիտենք կտեսնենք, որ դէմքի մի կողմը
մի քիչ ցածր է եկած, բիբերը անհասարար են և
յաճախ նեղուած:

Այդպիսի հիւանդները լինում են խիստ ազատ,
անչափ ծխում են, ողելից խմիչքները և սեռական
յարաբերութիւնները ի չարն են դործ դնում և մեր-
ձաւորում են այլանդակ կերպով:

Հիւանդութեան աստիճանաբար դարդանալով
պարզ կերպով նկատելի է լինում խելքի թուլացու-
մը. յիշողութիւնը համարեա կորցնում է իւր ոյժը
որոշ դէպքերի վերաբերմամբ, այն ինչ ուրիշ դէպ-
քերի վերաբերմամբ գրեթէ մնում է անխախտ:

Հիւանդը երբեմն մոռանում է իւր անունը, քա-
նի՞ որդի ունի, ի՞նչ են նրանց անունները, չի կարո-
ղանում գումարել հինգ և վեց:

Ձառանցական որոշ դատարարներ չեն ծնում
այստեղ հիւանդի գլխում, ինչպէս արաղընթաց կա-
թուածաճարութեան ժամանակ. հիւանդը իւր մե-
ծութիւնը արտայայտում է անմիտ ծախքերով, շուայ-
լութեամբ:

Հիւանդը լինում է անմաքրասէր, կեղտոտ, իւր

մարմնի և շորերի վերաբերմամբ անհոգ ու անկարգ:

Վերև յիշուած երեւոյթների հետ յաճախ պա-
տահում են նաև մենակաթուածներ (մոնոպլեզիա)
դանազան անդամների, ձեռքի, ոտքի, աչքի կոպերի
և այլն, որոնք գրեթէ չեն նկատուում ընդհանուր
կաթուածաճարութեան ժամանակ:

Ինչպէս էլ լինի հիւանդութեան այս տեսակ-
ներում, որ հիմայ նկարագրեցինք, սնդիկը և եօղը
մեծ չափով օգնում են և հիւանդութեան լայն ծա-
ւայ ստանալուն քիչ թէ շատ արգելք են լինում:

Հիւանդութեան այս տեսակը շատերը անուա-
նում են «սիֆիլիսական կեղծ ընդհանուր կաթուա-
ծաճարութիւն». այս դրուժիւնը վերջին քայլն է
ներկային սիստեմի շրջանում, որի հետեւանքը մեծ
մասամբ լինում է մահ:

Մի անգամ էլ յիշենք, որ ուղեղային սիֆիլիսի
հիւժքը պէտք է որ լինի սիֆիլիսին յատուկ անա-
տոմիական փոփոխումներ, օրինակ՝ դանդի ոսկրների
սիֆիլիսական վնասումներ, ուղեղի թաղանթի սի-
ֆիլիսական հիւանդութիւններ, ուղեղի միջի դում-
մային ուռոյցքներ, անօթների փոփոխութիւն, որի
պատճառով նրանց ծակոտիները կարող են նեղանալ
և առաջ բերել արօմքներ:

Այս հիւանդութիւնը քրոնիքական է, սովորա-
բար դիշերները լինում է գլխացաւ, նոյնպէս և տա-
քութիւնից լինում են գլխապտոյաններ, ուշադնացու-

Թիւն, աչքերի միանների կաթուած, էպիլեպսիայի
և ապոպլեքսիայի (ընկնաւորութեան և կաթուածա-
հարութեան) երեւոյթներ, խօսուածքի քայքայումն,
միգրու խանդարում և այլն:

Թուլանում է յիշողութիւնը, մտածողականու-
թիւնը, փոխւում է բնաւորութիւնը, գալիս է զըր-
զուած գրութիւն և հիպոխոնդրիայի տրամադրու-
թիւն, վրայ է հասնում սաստիկ բժամտութիւն,
նուազում և վերջապէս մահ...

ԻԲ.

Գանդուղեղից՝ եթէ ոչ աւելի, յամենայն դէպս,
ոչ պակաս վնասւում է ողնաշարի ուղեղը:

Ողնուղեղային սիֆիլիսի արտայայտութիւննե-
րը բազմատեսակ են լինում, բայց ամենից շատ այդ
հիւանդութիւնը յայտնւում է հանրաձանսթ ձևով,
որը յայտնի է «պիննայեա սուխուրկա կամ քաբէ»
անունով:

Ի՞նչ է իսկապէս տարեսը:

Տարեսը քրոնիքական ծանր առաջընթաց հի-
ւանդութիւն է:

Սովորաբար հիւանդութիւնը տարածւում է
ողնուղեղի ամբողջ տարածութեամբ, բայց շատ ան-
գամ հարուածում է նեարդային գրութեան և միւս
մասերը, ինչպէս և գլխի ուղեղը:

Այս հիւանդութեան ընթացքը բաժանւում է
երեք շրջանի, բայց պէտք է գիտենար, որ մէկ շրջա-
նից միւսին անցնելը կատարւում է աննկատելի կեր-
պով:

Առաջին շրջանը, սկզբնականը, բնորոշւում է
նրանով, որ ստորին անդամներում՝ զլխաւորապէս
ոտքի մասերում, մասներից սկսած մինչև փորը,
թուլցիկ ցուեր են զգացւում:

Ցուերը գալիս են ընդհատ-ընդհատ, մեծ կամ
փոքր դադարումներից յետոյ և սահմանափակւում
են համարեա մի կէտում, մնալով մի քանի ակնթարթ
և կրում են «շեշտական ցաւի» տալաւորութիւն:

Մի քանի հիւանդների շեշտական ցուերը
դուրապիպւում են եղանակի փոփոխութիւնների
հետ և իրանք՝ հիւանդները համարւում են թուշիտոզ
յօդացաւ (ըւմատիզմ):

Շեշտողական ցուերի հետ միևնոյն ժամանակ
յաճախ նկատւում է դարձեալ մի այլ երեւոյթ. դա
գօտեւորութեան զգացումն է:

Հիւանդին թւում է, թէ նա մէքքին կապած
ունի մի սեղմող գօտի. այս լինում է փորի ներքին,
միջին կամ վերին մասերում:

Շատ հիւանդների վրայ նկատւում է բիբերի
մշտական նեղացում, համարեա թէ մինչև քնդասելի
զլխի չափ:

Այս դէպքերում տեսողութիւնը տկարանում է

մինչև կատարեալ կուրութիւնս. կան և այլ նշաններ, բայց դա արդէն բժշկի գործն է:

Հիւանդութեան երկրորդ շրջանը մտնելիս՝ հիւանդը նկատում է, որ ինքը այնքան լաւ չի կարողանում իշխել ոտքերին ինչպէս առաջ, նա դժուարանում է սանդուխքներից իջնել, քայլել, հարթ յատակի կամ սառոյցի վրայ արագ շարժումներ անել և այլն:

Այս երևոյթներն այնքան սաստկանում են, որ հիւանդը ստիպուած է լինում շարունակ ոտքերին նայել, կանոնաւոր շարժումներ անելու համար:

Հիւանդը գանդատուում է, իբր թէ իւր մարմնի վրայով մտղուկներ են ման գալիս, չի զգում թէ ոտքերի տակ յատակ կայ և նրան թւում է, թէ ինքը քայլում է մի ինչ որ փափուկ բանի վրայ, իբրև թէ գորգի կամ թաղիքի վրայ. լոյս սենեակում աւելի լաւ է քայլում, քան թէ մութ տեղը:

Առանձնապէս ուշադրութեան արժանի է այն, որ երբ գնդասեղով ծակենք հիւանդի մի տեղը, ցաւ կգգայ նա մի կամ մի քանի վայրկեան յետոյ:

Հիւանդի շարժումները անկանոն են. այդ բանը աչքի է ընկնում աւելի ևս քայլելու ժամանակ:

Քայլելուց առաջ նա պէտք է դեռ սարքուի, ուղիղ կանգնի, յետոյ ոտքերը լայն բաց անի. քայլելիս ոտները աւելի է բարձրացնում, կրունկով խփում է դեանին և դէս ու դէն ձգում:

Որպէսզի հաստատուն կերպով կարողանայ ոտքի կանգնել, հիւանդը ձեռք է առնում դաւազան, յետոյ յենափայտ, իսկ վերջ ի վերջոյ շարժումներ անելը նրա համար դառնում է այնքան դժուար, որ ստիպուած է լինում ընկնել անկողին:

Երբեմն հիւանդի վերի անդամներն էլ (ձեռքերը) ոտների նման չեն հնազանդուում նրա կամքին. օրինակ՝ նա համարեա չի կարողանում կոճակները կոճկել:

Այնուհետև հիւանդութեան այս շրջանում վրայ են հասնում կոնքի դործարանների, այսինքն՝ միգափամփուշտի և ուղիղ աղիքի խանդարումներ:

Սկզբում մէզը բոճուում է, իսկ յետոյ ոչ մի հնար չի լինում մէզը պահելու:

Այսպէս էլ փորը նախ կապ է լինում, իսկ յետոյ այլևս չի կարողանում պահել. խեղճ հիւանդը այս միջոցին միշտ աղտոտուում է:

Սեռակոն կարողութիւնը հետզհետէ թուլանում է, մինչև որ բոլորովին ոչնչանում է:

Տաբետի այս երկրորդ շրջանում ներքին գործարանների մէջ նկատուում են մի շարք նեարդային աստիքներ, որ կոչուում են կրեւելք:

Ամենքից շատ բնորոշ է ստամոքսային «կրեւղը», որ կայանում է հեռեւեարում:

Հիւանդը՝ առանց մի պատճառի, յանկարծ կրծքի գդալի տակ զգում է սաստիկ ցաւ և յետոյ փսխում

է. թէ մէկը և թէ միւսը շարունակուում են մի բանի օր և վերին աստիճան ուժասպառ են անում հիւանդին, որովհետեւ նա ոչ մի բան չի կարողանում ուտել:

Այսպիսի կրիզներ լինում են միզափամփուշտում, կոկորդում և այլն:

Այնուհետեւ հիւանդական արտայայտութիւնները նկատուում են հիւանդի նեարդային սիստեմի նաև միւս մասերի և դիտի ուղեղի վրայ, որից առաջանում է հոգեկան գործունէութեան խանգարում:

Տարեսի ժամանակ վնասուում են և մարմնի յօդերը, մանաւանդ գարշապարր. սա ոսկրակերն է, որ յաճախ ոտք անդամահատելու պատճառ է դառնում:

Երրորդ շրջանը բնորոշուում է հիւանդութեան հետզհետէ դարգացումով:

Ձարգանում են կաթուածներ, մարտոդական և սեռական գործարանները հետզհետէ վերջնականապէս քայքայւում են:

Կամոց-կամոց հասնում են ընդհանուր նուագութեան նշաններ և հիւանդը մեռնում է կամ միզային գործարանների խանգարման պատճառով, կամ մի որևէ կողմնակի բարդուող հիւանդութիւնից:

Ի հարկէ, այստեղ էլ լինում են շեղումներ և տարբերութիւններ:

Տարեսը տեւում է տարիներ, մի քանիսինը տե-

ւում է 3-5 տարի, իսկ ոմանցը միայն առաջին շրջանը տեւում է 10-20 տարի:

Կասկած չկայ, որ մեծ մասամբ այս հիւանդութիւնն ունի պարզ առաջընթացութիւն, այսինքն՝ գնալով սաստկանում է և բացառիկ վէպքերում միայն կանգ է առնում:

Տարեսը ամենից շատ երեւում է միջին հասակում՝ 35-40 տարիներում:

Անշուշտ նրա ծագման գործում մեծ դեր է խաղում սիֆիլիսը, այնպէս որ տարեսով հիւանդներից 75-90 տոկոսը իրանց կեանքում սիֆիլիս են ունեցել:

Սիֆիլիսը ինքն ըստ ինքեան զարկ է տալիս տարեսով հիւանդանալու նախատարամայրուածներին:

Կան և այլ պատճառներ այդ հիւանդութեան. միսելը, ալիոհոլիզմը ատրեսի յայտնուելուն նպաստում են սիֆիլիսից ոչ պակաս:

Անկասկած այստեղ ևս մեծ նշանակութիւն ունի կանոնաւոր ու կրկնուած բժշկութիւնը, մանաւանդ սկզբի երեք տարիներում սնդիկով և եօղով:

Իսկ եթէ շարունակաբար և կրկնողաբար սնդիկային բժշկութիւն չէ եղած, սիֆիլիսը կարող է առաջ բերել կամ արագացնել հիւանդութեան առաջ գալն, մանաւանդ այն անձանց մէջ, որոնք արամագիր են:

ԻԳ.

Աւելորդ չեմ համարում այստեղ ասել մի քանի խօսք սիֆիլիսի ընթացքում պատահող հոգեկան հիւանդութիւնների մասին:

Առաջուայ նշանաւոր հոգեբոյժները սիֆիլիսին՝ իբրև զլխաւոր պատճառներից մէկին, վերապրում էին համարեա բոլոր հոգեկան հիւանդութիւնների կէտը:

Սակայն այդ հարցի օրինաւոր ուսումնասիրութիւնը սկսուում է միայն վերջին ժամանակներս:

Սյստեղ ծագում է մի հարց. ի՞նչ ձև են ստանում բուն սիֆիլիսից առաջ եկած հոգեկան հիւանդութիւնները...

Նախ և առաջ, սիֆիլիսից առաջ եկած հոգեկան հիւանդութիւնները շատ երկար են աւելում, որոնք արտայայտուում են իբրև ախտոգայտալ (հիպոխոնդրիա), մեյամադձութիւն, մոլեգնութիւն (մանիա), թուլամտութիւն և առաջընթաց կաթուածահարութիւն:

Բոլոր այս հիւանդութիւնների ընթացքում մէք տեսնում ենք շատ լուրջ երևոյթներ, այն է՝ յիշողութեան և մտաւոր կարողութեան թուլութիւն:

Ախտոգայտալը և մոլեգնութիւնը կարող են բոլորովին անհետանայ կամ վերափոխուել թուլամտութեան:

Բժիշկներից շատերը ուղեղի սիֆիլիսի ընթացքում առաջ եկած հոգեկան հիւանդութիւնները բաժանում են երկու կարգի:

Առաջին կարգին պատկանում են այն հիւանդութիւնները, որոնք սկսուում են իբրև մտաւոր ճնշուած դրութիւն և կամաց-կամաց տանում, հասցնում են ընդհանուր մտաւոր կարողութեան անկման, այսինքն՝ առաջընթաց թուլամտութեան, և պէտք է ասել, որ այս կարգի հիւանդութիւնները աւելի յաճախ են պատահում:

Երկրորդ կարգին պատկանում են նրանք, որոնք աւելի սուր ընթացք ունին, սկսում են աւելի ուժեղ կերպարանքով, որ առաջ է գալիս ուղեղի զրգուովից, և քիչ թէ շատ ստանում է զառանցանքի և կատաղութեան կերպարանք:

Հոգեկան հիւանդութիւնները տեղի են ունենում զլխաւորապէս սիֆիլիսի երկրորդ և երրորդ աստիճանի ընթացքում:

Հիւանդը նախ և առաջ սկսում է իրան վատ զգալ. նրա տրամադրութիւնը վատանում է, լինում է ախտը և ճնշուած. իւր սիրած պարսպմունքներից սկսում է սառչել և միայնութիւն է որոնում:

Քնի կարօտութիւնը առհասարակ աւելանում է, միտքը թուլանում է և այն մարդը, որ առաջ սուր ընդունակութիւնների տէր էր, պատահում է,

որ չի կարողանում իսկոյն պատասխանել իրան տրուած հարցին:

Պատահում է և հակառակը. այսինքն՝ հիւանդը ցոյց է տալիս մտաւոր ընդունակութիւնների ժամանակաւոր ճարտարութիւն, աւելի շարժուն է դառնում, խօսող և զգաստ:

Նրանց մտաւոր կեանքում առաջ են գալիս մեծ փոփոխութիւններ. նրանց մէջ նկատուում է մաքերի խանդարում, ասես թէ հիւանդը հարբած է. մի մի ժամանակ այդ դրութիւնը անհետանում է և հիւանդը ոչնչով չի գանազանւում առողջից. զժբազդաբար վերջ ի վերջոյ հիւանդութիւնը վերջանում է թուլամտութեան ախտով:

Ուստի, առհասարակ ուղեղի սիֆիլիսի ընթացքում հոգեկան կեանքի մէջ տիրապետող սեղ է բռնում մտքի, խելքի և հոգու թուլութիւնը:

Ինչպէս ասել ենք մի քանի անգամ, կրկնում ենք և այստեղ, որ հոգեկան հիւանդութիւնները սիֆիլիս ունեցողների հետ պատահում են միայն այն ժամանակ, երբ նրանք ունին նախատրամադրութիւն:

Հոգեկան հիւանդութիւններից առանձին ուշադրութեան արժանի են մերամադճոտութիւնը և ախտնբացաւը:

Այստեղ աւելի ակներև երևան է գալիս թուլամտութիւնը:

Յետոյ ուշադրութիւն է դրաւում սիֆիլիսավախութիւնը — սիֆիլիօֆօբիա, խելքդարութիւնը (ամենցիա), թուլամտութիւնը (գեմենցիա) և վերջապէս ապշութիւնը *):

Սիֆիլիսավախութիւնը կարող է նկատուել և սիֆիլիս չունեցողների վրայ, բայց աւելի յաճախ նրանց, որոնք վարակուած են այդ ախտով, որովհետև այդ դրութիւնը նրանց հոգեպէս սաստիկ տանջում է, այնպէս որ նրանց չղերը չեն կարող չթուլանալ:

Խելքդարութեան մասին մասնաւորապէս մտադիր եմ խօսել առանձին գրքոյկով:

Թուլամտութիւնը սիֆիլիսի ընթացքում բաւականին յաճախ է պատահում:

Եւ յիրաւի, այդ տեսակ հիւանդները, կարելի է ասել, բարոյապէս և հոգեպէս փոխւում են:

Սիֆիլիս ունեցողի մօտ դա կարող է լինել իբրև հետևանք նախընթաց հոգեկան հիւանդութիւնների, կամ կարող է զարգանալ բոլորովին առանձնապէս:

Ի նկատի ունենալով, որ սիֆիլիսը շատ տարածուած հիւանդութիւն է և վնասում է ոչ միայն հիւանդին՝ իրան, այլև նրա սերունդին, պէտք էր սպասել, որ ապշութիւնը՝ իբրև այլատերման — վատա-

*) Տես իմ «Առողջ ու հիւանդ երեխայի ողին» և «Մեր նեարդերը»:

սերման արտայայտութիւն, շատ յաճախ պատահէր, բայց իսկապէս այնքան էլ չենք տեսնում:

Սիֆիլիսի առնուփնները շատ անգամ քնում են անպատու:

Աւելի յաճախ այս առնուփնների երեխաները մօր արգանդից մեռած են ծնունդ, իսկ եթէ կենդանի ևս ծնունդ են, նրանցից շատերը մեռնում են կեանքի առաջին օրերում, շաբաթներում կամ ամիսներում երեխաների դանանան հիւանդութիւններից, օրինակ՝ ուղեղի թաղանթների բորբոքումից:

Եթէ այդպիսի երեխաները ազատուում են այդ բոլոր հիւանդութիւններից և չեն մեռնում, իրանց վրայ փոքր ի շատէ կրում են մտաւոր զարգացման պակասաւոր կազմութեան նշանները, այդ դրութեան աննախանձելի և թշուառ հետեանքներով հանդերձ:

Պէտք չէ մոռանալ ժառանգականութեան օրէնքները. սիֆիլիսը ծանր ու քայքայիչ հիւանդութիւն է և նա անշուշտ առաջ կբերէ ապշութիւն:

Պարզ է, որ այս ամենը պատահում է այն բնութանքներում, ուր սիֆիլիսի ախտը իւր ժամանակին օրինաւոր կերպով չէ բժշկուած:

Այսպէս պարզ տեսանք, թէ սիֆիլիսը ինչ քայքայիչ ազդեցութիւն է գործում մարդու օրգանիզմի վրայ:

Բայց կրկնում ենք, այս չարիքը անհասական է. հիւանդը ինքն է իւր մեղքերի հետ հաշիւ աւանում:

Սակայն այս դեռ թշուառութեան կէսն է. օրա հետ՝ այսպէս թէ այնպէս, դեռ կարելի է հաշտուել:

Սիֆիլիսի ամենամեծ չարիքն ու ահաւորութիւնը նրանումն է, որ նա անվրէպ կերպով հիւանդին հարուածելով՝ միանգամայն անսխալ ու զօրեղ հարուած է հասցնում նաև նրա սերնդին:

Սիֆիլիս ունեցողի սերունդը լոյս աշխարհ է դալիս քայքայուող առողջութեամբ:

Սիֆիլիսոտ սերունդի նեարդային սիստեմը ի ծնէ արդէն խախուտ ու հարուածուած է:

Ձգաձգութիւններ, բնկնաւորութիւն, թուլամտութիւն, հոգեկան աննորմալ դրութիւն, օրգանիզմի անգօրութիւն մաքառելու օրէէ հիւանդութեան դէմ, ներաստինիայի և իստերիկայի բազմաթիւ ձևերը, մի խօսքով այլասերման բոլոր տեսակներն ու կերպերը կարող են հեշտութեամբ երևալ սիֆիլիս ունեցողի սերնդի վրայ, որը, ի հարկէ, միևնոյն ժամանակ և յանցաւորութեան հսկումն ցոյց կապ, առաջ բերելով դողեր, հարբածներ և այլն:

Սիֆիլիսի կործանիչ ազդեցութիւնը աւելի զօրեղ երևում է երկրորդ սերնդի — գաւակների վրայ. այդ ազդեցութիւնը բաւականաչափ տկարանում է

երրորդ սերնդի — թոռների վրայ և, ըստ երևոյթին, բոլորովին անհետանում չորրորդ սերնդի մէջ՝ սիֆիլիս ունեցողի թոռների անգաւակութեան ու մահացման պատճառով համարեա միշտ:

Այսպէս ուրեմն՝ սիֆիլիսը, ինչպէս և այլոհո- լիզմը, սպառում են մարդկային սերունդը և ներկա- յայցնում են այլասերման մի շարիք, որի դէմ մաքա- ուելու համար պէտք է ղինուորուի ամբողջ մարդ- կութիւնը:

Սիֆիլիսն է, ցաւօք սրտի, մեր նահապետական օջախի այլասերման պատճառներից մէկը:

Մեր խօսքը վերջացնելով կարող ենք ամփոփել մեր ասածները այսպէս՝

1) Սիֆիլիսը ամբողջ օրդանիզմի հիւանդութիւն է, չի խնայում մարդու ոչ մի դործարանը, ոչ էլ ուղեղը:

2) Սիֆիլիսը չի խնայում ոչ հարստին, ոչ աղ- բանին, ոչ ծերին, ոչ մանուկին, ոչ էլ դեռ մօր ար- դանդում գանուող երեխային:

3) Միայն երկարատե, կանոնաւոր բժշկութիւ- նը կարող է բժշկել հիւանդին և քիչ թէ շատ թու- լացնել սիֆիլիսի ծանր աստիքները, հակառակ դէպքում սիֆիլիսը առաջացնում է բթամտութիւն և վաղաժամ մահ:


4) Սիֆիլիսը բժշկելու զօրեղ միջոցներն են իր ժամանակին սնդիկը և եօզը. կանոնաւոր կեանք, սնունդ, կլիմայական պայմաններ, հասակ — նոյնպէս մեծ նշանակութիւն ունին:

5) Ծխախոտը, ոգելից խմիչքները, որոնք այն- քան ներդործում են առհասարակ նեարդային սի- տեմի վրայ, ցանկալի է բոլորովին թողնել:

6) Սիֆիլիսի և վիներական հիւանդութիւնների դէմ լիակատար ապահովութիւնը՝ ողջախոհութիւնն է:

7) Ծնողները, առաւելապէս մայրերը, պէտք է և պարտական են զիտենալ առողջապահական հի- մունքները, բացի մանկավարժութիւնից, որպէսզի կանոնաւոր դաստիարակեն իրանց երեխաներին և ժամանակին կարողանան օգնութեան հասնել, մա- նաւանդ երկու սեռի սեռական հարցերում իրանց ժամանակ:





«Ազգային գրադարան»



NL0267697

6774